



This project is funded
by the European Union



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

**ԿԱՐԾԻՔ-ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ 2019-2022ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**Երևան
Հունվար, 2019թ.**

ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 19-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻՀԱ) կողմից Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ, կազմակերպվել էր «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագծի (այսուհետ՝ Նոր ռազմավարություն) հանրային քննարկում՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ներկայացնող, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այս առումով, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ողջունում է պետական իրավասու մարմինների պատրաստակամությունը՝ կառուցողական դաշտում երկխոսելու և Նոր ռազմավարության լրամշակման մասնակցային գործընթացը ապահովելու համար: Սույնի կապակցությամբ հարկ է հավելել, որ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետ՝ Կոալիցիա) և ԻՀԱ-ն դեռևս 2018 թվականի հունիսի 11-ին N 02/10 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն էր ներկայացրել *«ՀՀ 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության» Հայեցակարգային դրույթներ» փաստաթուղթը, որը ներառում էր թվով 49 խումբ առաջարկություն:* Այդ առաջարկություններից 11-ն ամբողջությամբ ընդունվել և տեղ են գտել Ռազմավարության նախագծում, 7 առաջարկություն ընդունվել է մասնակի, 6-ն ընդունվել է ի գիտություն, 22-ը չի ընդունվել, 1 առաջարկություն կատարման փուլում է, իսկ 2 առաջարկության մասով էլ վերոնշյալ քննարկման ընթացքում պարզ դարձավ, որ նախատեսվում է դրանք ներառել Ռազմավարության նախագծում:

Վերոնշյալ գրությամբ ևս նշվել է, որ Կոալիցիան և ԻՀԱ-ն բարձր են գնահատում այն ձևաչափը, որի հիման վրա մշակվել է նոր հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը, այն է. նախատեսվում է հակակոռուպցիոն նոր քաղաքականությունը իրականացնել կրթական, կանխարգելիչ և իրավապահ գործունեության բաժանմամբ: Հարկ է ընդգծել, որ Կոալիցիան և ԻՀԱ-ն բազմիցս բարձրաձայնել են, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը, ինչպես ցույց է տալիս միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումը, կառուցվում է երեք հիմնասյուների վրա՝ **հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիայի կանխարգելում և պատժի անխուսափելիություն կոռուպցիոն իրավախախտումների դեպքում:**

Սույնով Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացնում է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագծի վերաբերյալ

առաջարկություններ և դիտարկումներ՝ դրանք մշակելով՝ Նոր ռազմավարության նախագծի տրամաբանության և նախանշած երեք ուղղությունների ներքո:

Նշենք, որ սույն փաստաթղթում ներառված դիտարկումների և առաջարկությունների համար որպես հիմք են ընդունվել ներքոշարադրյալ փաստաթղթերը, ինչպես նաև՝ միջազգային լավագույն փորձը.

1. Միջազգային փաստաթղթեր.

- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ուժի մեջ մտած՝ 14.12.2005թ.,
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի կողմից իրականացված մոնիտորինգի չորրորդ շրջափուլի արդյունքում պատրաստված զեկույց (այսուհետ՝ ՏՀԶԿ զեկույց),
- Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ-ի (GRECO) Հայաստանի գնահատման չորրորդ փուլի «Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը» վերաբերյալ պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույց,
- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի 2018-2020թթ ռազմավարություն, ընդունված՝ 16.01.2018թ.,
- Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, ստորագրված՝ 24.11.2017թ.,
- «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին 20 արդյունք. Առաջնահերթությունների և շոշափելի արդյունքների վրա կենտրոնացում», ընդունված՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից 09.06.2017թ.,
- ԵՄ-Հայաստան Համագործակցության խորհրդի N1/2017 հանձնարարական «Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններ»-ի վերաբերյալ, ընդունված՝ 20.11.2017թ.,
- ԵՄ-Հայաստան ֆինանսական հետևյալ համաձայնագրերը՝
 - «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր»,
 - «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. Ավելի արդյունավետ և պատշաճ հանրային կառավարման միջոցով լավագույն ծառայությունների մատուցում»,

2. Ներպետական իրավական ակտեր և այլ փաստաթղթեր

- 2018 թվականի հունիսի 25-ին ԱԺՈ-006-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիր,
- ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի նիստում հավանության արժանացած «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» N 42 արձանագրային որոշում (այսուհետ՝ Մեթոդական հրահանգ),
- Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի 2019-2023թթ. Ռազմավարական պլան, ընդունված՝ 30.01.2019թ.:

Սույն փաստաթղթի շրջանակներում ներկայացնում ենք Կոալիցիայի և ԻՀԱ-ի առաջարկությունները ըստ հետևյալի.

- I. *Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ,*
- I. *Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագիծ:*

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԻԾ

Ա) ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1) ՀՀ 2019-2022թթ. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մշակման գործընթացը (այսուհետ՝ Ռազմավարության նախագիծ) պետք է հիմնված լինի.

1.1. միջազգային փաստաթղթերի վրա՝ հիմք ընդունելով այդպիսի ռազմավարությունների կազմման համար ամրագրված սկզբունքները: Դրանցից հիմնականն է հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ **Կուալա Լումպուրի հայտարարությունը (ընդունվել է 2013 թվական, հոկտեմբերի 21-22-ին, Կուալա Լումպուրում) և դրանում տեղ գտած սկզբունքները:** Կուալա Լումպուրի սկզբունքների կարևորության մասին անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի մասնակից պետությունների կոնֆերանսի ընթացքում (25 - 29 նոյեմբեր, 2013թ, Պանամա), որտեղ մասնակիցների կողմից ընդունվել է 5/4 բանաձևը:¹

Կուալա Լումպուրի հայտարարության մեջ նշվում է, որ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործընթացում **շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածությունն** իրավունքի հիմունքներ է ստեղծում և օգնում ապահովել որդեգրված ռազմավարությունների ընդունելիությունը և արդյունավետությունը: Պետական կառույցները (գործադիր, օրենսդիր և դատական) պետական և ենթա-պետական մակարդակներում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, մասնավոր սեկտորը, մեդիան, մասնագիտական հանրությունները, առևտրային և արդյունաբերական միավորումները և արհմիությունները, սկադեմիական հաստատությունները, երիտասարդական և մշակութային կազմակերպությունները կարող են ծառայել որպես կարևոր դաշնակիցներ և գործընկերներ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործում և կարող են կրճատել բարեփոխումների ուղղված ջանքերի խոցելիությունը քաղաքական ղեկավարությունում փոփոխությունների հանդեպ:

¹Տե՛ս բանաձևի 11-րդ կետը այստեղ. <https://www.unodc.org/unodc/en/treaties/CAC/CAC-COSP-session5-resolutions.html>

ՏՀԶԿ զեկույցի 1-ին առաջարկության 1-ին կետում նույնպես նշված է, որ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը պետք է մշակվեն **շահագրգիռ կողմերի լայն շրջանակի մասնակցությամբ և հիմնված լինեն կարիքների և ռիսկերի գնահատման վրա:**

Այսպիսով, ռազմավարությունը մշակելիս, չեն պահպանվել Կուալա Լումպուրի հետևյալ կարևորագույն սկզբունքները՝

ա. Քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստ.

Պետությունները պետք է հաշվի առնեն իրենց որոշակի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստը իրենց հակակոռուպցիոն ռազմավարությունների նախագծման ժամանակ:

բ. Ընդհանուր տեսլական. Համաձայնություն պետք է ստեղծվի ռազմավարությունների ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ:

գ. Համակարգման ամրապնդում. Հակակոռուպցիոն ռազմավարությունները մշակման գործընթացի շրջանում, ինչպես նաև իրականացման ու մոնիթորինգի փուլերում պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը գործակալությունների ներսում և նրանց միջև համակարգումն ընդլայնելու վրա:

դ. Հիմնավոր գիտելիքային հենք. Ռազմավարությունների մշակումը, իրականացումը և մոնիթորինգը պետք է հիմնվեն հակակոռուպցիոն քաղաքականությունների և հաստատությունների ոլորտում հուսալի ախտորոշման, կարիքների և ռիսկերի, խոցելի շրջանների և բացթողումների մասին վկայության վրա:

1.2. Ռազմավարության նախագիծը պետք է բխի ՀՀ-ի կողմից վերոնշյալ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից, համահունչ լինի միջազգային կառույցների կողմից կազմված զեկույցներում տեղ գտած առաջարկություններին,

1.3. Ռազմավարության նախագիծը պետք է համապատասխանի ներպետական օրենսդրությամբ նախատեսված՝ այդպիսի ռազմավարական փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ Մեթոդական հրահանգին:

Առաջարկում ենք

Ռազմավարության նախագծի լրամշակումը իրականացնել՝ հաշվի առնելով վերը թվարկված սկզբունքները, ինչպես նաև այն քննարկման առարկա դարձնել քաղաքացիական հասարակության լայն շերտերի շրջանում՝ կազմակերպելով նաև մարզային քննարկումներ, և հասնել դրա վերջնական տարբերակի վերաբերյալ հասարակական կոնսենսուսի ձևավորմանը:

Բ) ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• Հակակոռուպցիոն նախագծում

1) Ռազմավարության նախագծի նախագծումը և բովանդակությունը հիմնված չեն **Կուլա Լուսպուրի այնպիսի կարևորագույն սկզբունքների վրա, որոնք են՝**

ա. Հիմնավորում, հիմնարար և իրատեսական նպատակներ. Հիմնարար նպատակները և հիմնավորումները միջնորդությունների համար պետք է սահմանվեն ազգային առաջնահերթությունների հիման վրա, ինչպես նաև բացերն ու կարիքները պետք է նախանշվեն:

բ. Համապարփակ և համակարգված մոտեցում. Հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է կազմակերպվեն համընդհանուր ամբողջական մոտեցմամբ՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ոլորտին հատուկ անհրաժեշտությունները:

գ. Պարզ և հասկանալի փաստաթուղթ. Ռազմավարությունները պետք է լինեն պարզ, հակիրճ և հեշտ ընկալելի:

դ. Այլ համապատասխան պետական ծրագրերի/բարեփոխումների օրակարգի մեջ ինտեգրում. Հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է հաշվի առնեն և կապեր հաստատեն այլ համապատասխան պետական ծրագրերի հետ (օր.՝ դատական ոլորտի, հանրային կառավարման բարեփոխումներ, բաց կառավարություն և այլն) և պետք է փորձեն համագործակցություն հաստատել այլ գործակալությունների հետ:

Ռազմավարության նախագծի 1.2-րդ մասը նվիրված է **«Նոր Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակին և խնդիրներին»:** Ռազմավարության նախագծի 10-րդ կետով նախատեսվել է, որ. **«Հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակն է՝ կոռուպցիայից զերծ հանրային ծառայություն և հասարակություն ստեղծելու:** Այդ նպատակների իրագործման առումով կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքականության մշակումն ու իրականացումը, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների բարձր վստահության օգտագործումը՝ որպես կոռուպցիայի նկատմամբ գրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանման միջոց:»:

Նախ անդրադառնալով ռազմավարության նպատակի բովանդակային ձևակերպմանը՝ պետք է նշենք, որ այն ձևակերպված է ոչ հստակ և միանշանակ չի ընկալվում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ «կոռուպցիայից զերծ **«հանրային ծառայություն»** և կոռուպցիայից զերծ **«հասարակություն»** ստեղծելու» նպատակները **որպես ռազմավարությամբ սահմանված խնդիրների լուծման հետևանքով ակնկալվող արդյունք(ներ) կամ արդյունքային ցուցանիշներ,**

իրար հետ համադրելի չեն, քանի որ, եթե կոռուպցիայից զերծ «հանրային ծառայություն» ունենալը կարող ենք համարել կարճաժամկետ կամ միջնաժամկետ ժամանակահատվածում իրականացվելիք նպատակ և դրան հասնենք նոր հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ժամկետներում, ապա նույնը չենք կարող ասել կոռուպցիայից զերծ «հասարակություն» ունենալու նպատակի դեպքում, քանի որ այն առավել ընդհանրական է ձևակերպված ու դրան հասնելու համար առավել երկար ժամանակահատված է պահանջվում:

Երկրորդ. գտնում ենք, որ ռազմավարության նպատակի նման ձևակերպումը թերի է և ամբողջապես չի արտահայտում Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության հեռանկարը: Հակակոռուպցիոն քաղաքականության թիրախում պետք է լինեն ոչ միայն հանրային ծառայությունը և, գլոբալ առումով, հանրությունը, այլև քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձինք, բիզնես սեկտորը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Բացի այդ, որպես ռազմավարական հիշյալ նպատակներին հասնելու կամ դրանք իրագործելու այսպես ասած «գրավական» կարևորվել է երկու հանգամանք.

- 1) կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքականության մշակումն ու իրականացումը,
- 2) պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների բարձր վստահության օգտագործումը որպես կոռուպցիայի նկատմամբ գրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանման միջոց:

Մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրագործման առաջնային երաշխիք պետք է հանդիսանան ազգային առաջնահերթությունների հիման վրա վեր հանված խնդիրների լուծմանը միտված կոնկրետ թիրախային միջոցառումներն ու դրանց իրականացման արդյունքում ակնկալվող **իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշները:**

Ինչ վերաբերում է Ռազմավարության նախագծի 11-րդ կետով որպես ռազմավարության առաջարկված խնդիրներ շարադրված ութ խումբ խնդիրներին, ապա գտնում ենք, որ դրանք նույնպես խմբագրման և հստակեցման կարիք ունեն: Օրինակ, որպես խնդիր նախատեսվել է **«Առավելագույն բարեվարք հանրային ծառայության դասի ստեղծումը»:** Բայց համանման մոտեցում որդեգրված էր նաև նախորդ ռազմավարության շրջանակներում: Այդ առնչությամբ գտնում ենք, որ նախ՝ հարկավոր էր գնահատել սույն խնդրի լուծման մասով նախորդ ռազմավարության արդյունքները, այնուհետև՝ քաղված դասերի հիման վրա մշակել

նոր խնդիրները: Կամ, ասենք, որպես խնդիր է ձևակերպվել **«Բիզնես ոլորտում բարեվարքության հաստատումը, բիզնեսի և քաղաքականության տարանջատման ապահովումը»**: Կարծում ենք՝ առհասարակ պետք է խուսափել դեկլարատիվ բնույթ ունեցող սահմանումներից, անցում կատարելով ավելի գործուն և արդյունք ապահովող ձևակերպումների: Մասնավորապես, խոսելով բիզնես ոլորտում բարեվարքության մասին, պետք է նախատեսել նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը և իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը ողջ ծավալով: Այս մասով համապատասխան առաջարկներ ներկայացվել են սույն փաստաթղթի մյուս մասերում:

Թվարկվող խնդիրներից է նաև՝ **«Կայուն և գործուն հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի նախանշումը»**: Գտնում ենք, որ նախանշում եզրույթը տեղին չէ օգտագործել, քանի որ կոռուպցիայի դեմ պայքարելու համար տարիներ շարունակ նախանշվել են ուղղություններ: Ներկայումս Հայաստանում հարկավոր է գործարկել ինստիտուցիոնալ լուծումներ, և այս առումով նախատեսել հստակ մեխանիզմների ներդրում և գործարկում:

Վերոնշյալ կետում որպես առաջադրված խնդիր, նախատեսվել է **մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմի արդյունքում՝ ժամանակավրեպ միջոցառումների արդիականացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը**:

Այդ առնչությամբ գտնում ենք, որ Ռազմավարության նախագծում անհրաժեշտ է մանրամասնել, թե ի՞նչ պետք է հասկանալ «ժամանակավրեպ միջոցառումներ» ասելով: Արդյո՞ք այն ենթադրում է նախորդ՝ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով (այդ թվում ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային ծրագրերը) նախատեսված, սակայն չկատարված միջոցառումները: Եթե այո, ապա ինչպիսի՞ մեթոդների կիրառմամբ է որոշվելու թե չկատարված միջոցառումներից որո՞նք են առավել կարևորները, որպեսզի ներառվեն 4-րդ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների շրջանակներում:

Այսպիսով, պետք է հաշվի առնել, որ Ռազմավարության նախագծով է նախանշվելու հակակոռուպցիոն նոր քաղաքականության առաջնայնություններն ու խնդիրները, որոշվելու հակակոռուպցիոն մարմինների՝ նոր ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու նպատակահարմարությունը, ինչպես նաև ամրագրվելու այն միջոցառումները, որոնք նվազագույնի պետք է հասցնեն հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առկա կոռուպցիոն դրսևորումները, բարձրացնեն կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահությունն ու աջակցությունը: Հիմք ընդունելով

այս հանգամանքները՝ գտնում ենք, որ առաջնահերթ հասարակական փոխհամաձայնության պետք է հասնել ռազմավարության կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների և այն տեսլականի շուրջ, որոնք պետք է դրվեն Ռազմավարության նախագծում: Ռազմավարության նախագծի նպատակները, որպես արդյալսին իրենց մեջ պետք է արտացոլեն դրանով սահմանված խնդիրների լուծման արդյունքները, լինեն հստակ և իրատեսական շարադրված:

Ռազմավարության նախագծում ներառվող նպատակների և խնդիրների հստակ ձևակերպման համար օգտակար կարող է լինել հենց ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի բուն նպատակները, որոնք տեղ են գտել առաջին հոդվածում: Դրանք են.

- ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.
- բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.
- գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:

2) Ռազմավարության նախագիծը չի համապատասխանում Մեթոդական հրահանգին:
Մասնավորապես, 41-րդ, 43-րդ, 50-րդ կետերի համաձայն՝

«41. Ռազմավարական նպատակների համար պետք է սահմանվեն իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, որոնք հետագայում հիմք կհանդիսանան ծրագրերի նպատակների չափման, առաջընթացի և արդյունավետության գնահատման համար:»:

«43. Ռազմավարական փաստաթղթերում արդյունքների ցուցանիշները սահմանելիս, դրանցից յուրաքանչյուրի գծով պարտադիր պետք է սահմանվեն ինչպես համապատասխան թիրախային, այնպես էլ դրանց բազային ցուցանիշները: Բազային ցուցանիշները նկարագրում են համապատասխան ցուցանիշի այն փաստացի մակարդակը, որի նկատմամբ սահմանվել են թիրախային ցուցանիշները և որի նկատմամբ նաև հետագայում գնահատվելու է համապատասխան արդյունքի գծով առաջընթացը: (...):»:

«50. Որևէ նպատակի չափման համար արդյունքային ցուցանիշը որակյալ և օգտակար համարվելու համար այն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1). Յուցանիշների սահմանման ժամանակ անհրաժեշտ է խուսափել ընդհանրական, անորոշ, ոչ հստակ բնույթի արտահայտություններից (օրինակ՝ «բարձր որակով», «տարվա ընթացքում», «պատշաճ մակարդակով» և այլ արտահայտություններից),

3). Յուցանիշը կարող է լինել որակական կամ քանակական, ընդ որում քանակական ցուցանիշը պետք է լինի չափելի իսկ որակականը՝ գնահատվող

5) Յուցանիշը պետք է տրամաբանորեն կապված լինի համապատասխան նպատակների կամ արդյունքների հետ և նկարագրի դրանք՝ շեշտադրելով այն արդյունքները, որոնք որոշում են, թե արդյոք ծրագրի կամ ավելի բարձր մակարդակի ռազմավարական նպատակները/թիրախները նվաճվել են, (...):

Բացի այդ, կարևոր է, որ ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հիմնված լինեն մեթոդական հրահանգի 52-րդ կետով նախատեսված արդյունքային ցուցանիշների նկարագրության ձևաչափի աղյուսակի վրա: Մասնավորապես, հարկավոր է յուրաքանչյուր արդյունքի մասով նախատեսել հետևյալ ցուցանիշային նկարագիրները².

- i. **Նպատակը/ կարևորությունը.** բացատրվում է թե ինչ է ցույց տալիս ցուցանիշը և ինչու է այն կարևոր:
- ii. **Տեղեկատվության հավաքագրումը/աղբյուրը.** նկարագրվում է, թե որտեղից է ստացվում տեղեկատվությունը և ինչպես է այն հավաքագրվում:
- iii. **Հաշվարկման մեթոդը.** հստակորեն նկարագրվում է թե ինչպես է ցուցանիշը հաշվարկվում:
- iv. **Տեղեկատվության սահմանափակումները.** բացահայտվում են ցուցանիշի հետ կապված տեղեկատվության բոլոր սահմանափակումները, ներառյալ գործոնները, որոնք դուրս են ոլորտային գերատեսչությունների վերահսկողությունից:
- v. **Ցուցանիշի տեսակը.** ներկայացվում է, թե ինչ է չափում ցուցանիշը (վերջնական, միջանկյալ կամ ուղղակի արդյունք, կամ կատարողականի այլ չափումներ՝ ծախսարդյունավետություն, նպատակային արդյունավետություն):
- vi. **Ներկայացման եղանակը.** նկարագրում է, թե ինչպես է ներկայացվում կատարողականը՝ կուտակային թե ոչ կուտակային եղանակով:

² Հարկ է նշել, որ նշված ցուցանիշային նկարագիրների կիրառելիությունը մանրամասն դիտարկվել է 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում տեղ գտած միջոցառումների մասով՝ սույն փաստաթղթի 2-րդ բաժնում, որտեղ ներկայացված են առանձին հակակոռուպցիոն միջոցառումները:

vii. **Հաշվետվողականության ցիկլը.** ներկայացվում է ցուցանիշի հաշվետվողականության պարբերականությունը՝ ամսական, եռամսյակային կամ տարեկան:

viii. **Թույլատրելի շեղումը.** բացահայտում է, թե թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշի քանի տոկոսային կետով շեղումն է համարվում թույլատրելի:

Վերոհիշյալ պահանջները պետք է վերաբերվեն ինչպես **ռազմավարական նպատակները նկարագրող արդյունքային ցուցանիշներին**, այնպես էլ կարող են վերաբերվել այդ նպատակների հասնելու համար իրականացվող **ծրագրի միջոցառումների համար սահմանվող հիմնական կատարողական ցուցանիշներին** (տե՛ս մեթոդական հրահանգի 53-րդ կետը):

Հարկ է նշել, որ շրջանառված Ռազմավարության նախագծով նախատեսված են վերը նշված աղյուսակով սահմանված միայն հետևյալ ցուցանիշային նկարագրերը. **Համառոտ նկարագրությունը, Նպատակը/ կարևորությունը, Պատասխանատվությունը:**

Առաջարկում ենք

i. Ռազմավարության նախագծի հետագա լրամշակման աշխատանքներում առավելագույնս ուշադրություն դարձնել վերոնշյալ փաստաթղթերով ամրագրված պահանջներին և Ռազմավարության նախագիծը խմբագրել՝ հնարավորինս համապատասխանեցնելով Կուլալա Լուսավորի սկզբունքներին և Մեթոդական հրահանգին:

ii. Նախատեսել հակակոռուպցիոն ռազմավարության գործողության ժամկետը՝ մինչև 2023 թվականը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսված ժամկետներից ավելի ուշ է ընդունվելու սույն Ռազմավարությունը:

• Բովանդակություն

1) Ռազմավարության նախագծի նախաբանի վերջին պարբերությամբ նշված է. «(...) Ընդ որում, **ռազմավարությամբ նախանշված ուղղությունների իրականացման երաշխիքը կլինի նոր կառավարության կողմից դրսևորած քաղաքական աննախադեպ կամքը**»: Գտնում ենք, որ սույն ձևակերպումը թերի է և ամբողջությամբ չի արտացոլում հակակոռուպցիոն պայքարի գաղափարախոսությունը: Իրավամբ, քաղաքական կամքը անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է կոռուպցիայի դեմ համակարգված պայքարի հարցում: Քաղաքական կամքը պետք է արտահայտվի՝ ներդնելով արդյունավետ երաշխիքներ, որպիսիք են՝ հակակոռուպցիոն պայքարի հաջողված մեխանիզմները և իրավապահ ու իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների զարգացումը: Հիմք ընդունելով վերոգրյալը, **առաջարկում ենք խմբագրել առանձնացված հատվածը՝ վերը նշվածի լույսի ներքո:**

2) Ռազմավարության նախագծի 1.1 մասը վերաբերում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2015-2018 թթ. ծրագրի արդյունքներին և բացթողումներին: Ռազմավարության նախագծի ներածության մասում նշված է. «Թեև նախորդ ռազմավարությունների շրջանակներում մշակվել և ընդունվել էին բազմաթիվ օրենսդրական կարգավորումներ, օրենսդրությունը համապատասխանեցվել էր միջազգային չափանիշներին, այդուհանդերձ, տարբեր ցուցանիշների համաձայն կոռուպցիայի մակարդակը, քաղաքացիների կողմից դրա ընկալումը, գործնականում կոռուպցիան արմատախիլ անելուն ուղղված քայլերի բացակայությունը տարակուսանքի տեղիք էին տալիս:»:

Այնուհետև, Ռազմավարության նախագծի 5-րդ կետի 7-րդ, 12-րդ, 13-րդ ենթակետերում նշված է.

«5. Անդրադառնալով Ռազմավարության կատարման արդյունքներին, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 միջոցառումների ծրագրի առանցքային արդյունքներից են.

70 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթը, որի ընդունմամբ քրեականացվել է ապօրինի հարստացումը և սահմանվել է քննչական ենթակայությունը: Նշյալ փոփոխության արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն զերազանցում են նրա օրինական եկամուտները, 2017 թվականի հունիսի 1-ից դիտվում են ապօրինի հարստացում և ենթակա են քրեական պատասխանատության:»

120 Պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձինք՝ աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով, իսկ համապատասխան պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերում կատարվել են սահմանված փոփոխություններ:

130 Պետական կառավարման համակարգի բոլոր մարմինների հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուները շարունակական վերապատրաստումներ են անցնում:»

ԻՀԱ-ն և Կոալիցիան տարիներ շարունակ թե՛ ազգային, և թե՛ միջազգային հարթակներում մշտապես կարևորել և ջատագովել են հիշյալ իրավական ակտերի ընդունումը: Միևնույն ժամանակ պետք է փաստենք, որ օրենսդրական ակտերի ընդունմանը պետք է հաջորդեին դրանց գործնական կիրառումը: Այս առումով, ցավոք պետք է նշենք, որ Հայաստանը դեռևս չունի շոշափելի ձեռքբերումներ: Ուստի, **առաջարկում ենք ռազմավարության շրջանակներում նշել հիշյալ իրավական ակտերի գործնական կիրառմանը խոչընդոտող հիմնական պատճառները/խնդիրները, միաժամանակ Ռազմավարության նախագիծը լրամշակելիս միջոցառումներ նախատեսել այդ պատճառների/խնդիրների լուծման և այդ իրավական ակտերի կենսագործման համար:**

Առաջարկում ենք՝ Ռազմավարության նախագծի 5-րդ կետի 12-13-րդ ենթակետերում գնահատականներ տրվեն նաև այն մասով, թե, օրինակ, որքանով են հիշյալ հակակոռուպցիոն ծրագրերը և վերապատրաստումները արդյունավետ եղել, գնահատվել են արդյո՞ք դրանց ազդեցությունը թիրախ խմբերի հակակոռուպցիոն վարքագծի վրա:

- 3) Ռազմավարության նախագծի **1-4-րդ կետերում** խոսվում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատման մասին: Մասնավորապես, Նախագծի 1-ին կետի համաձայն՝ «ՀՀ-ում հակակոռուպցիոն նոր քաղաքականության առաջնայնություններն ու խնդիրները նախանշելու, ՀՀ հակակոռուպցիոն մարմինների նոր ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու նպատակահարմարությունը որոշելու, հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում կառավարության ապագա քայլերը որոշելու նպատակներով կարևորվում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը:»

Սրան զուգահեռ, Ռազմավարության նախագիծը շրջանցում է հետևյալ հարցերի պատասխանները.

- որքանով է արդյունավետ եղել նախորդ ռազմավարությունը և դրա միջոցառումների ծրագիրը, այդ թվում՝ ոլորտային (առողջապահություն, կրթություն, պետական եկամուտների հավաքագրում, ոստիկանության կողմից հանրությանը մատուցով ծառայություններ) տարեկան հակակոռուպցիոն ծրագրերը:
- Ինչպիսի՞ արդյունք և ազդեցություն է ունեցել նախորդ ռազմավարությունը և դրա միջոցառումների ծրագրերը Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարում:
- Արդյո՞ք ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ, թե՞ մասնակի: Մասնակի կատարման դեպքում,

որոնք են եղել չկատարման պատճառները, ի՞նչ ճակատագիր է սպասվում չիրականացված միջոցառումներին:

Առաջարկում ենք նշված հարցերի պատասխանները նույնպես քննարկել Ռազմավարության նախագծում:

- 4) Առաջարկում ենք Ռազմավարության նախագծում ներկայացնել նաև նախորդ Ռազմավարության գործողության ընթացքում իրավապահ (այն մարմինները, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու են իրականացնել կոռուպցիոն բնույթի գործերի քննություն) և հակակոռուպցիոն կանխարգելիչ գործունեություն իրականացնող մարմինների (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով, ՀՀ վարչապետին կից Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ) գործունեության արդյունավետության, արդյունքների և ազդեցության գնահատումը:
- 5) Ռազմավարության նախագծի 2-րդ կետով նախատեսված է. «2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրն ուղղված էր բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյաների միջոցով կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը:»
Առաջարկում ենք ռազմավարությամբ անդրադառնալ այն հարցին, թե, որքանո՞վ է հանրային ծառայողների դասը դարձել բարեխիղճ և պատասխանատու, որքանո՞վ է հանրությունը մասնակցել հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը:
- 6) Ռազմավարության նախագծի 5-րդ կետի 10-րդ ենթակետում անդրադարձ է կատարվում նաև ազդարարման համակարգին: Գտնում ենք, որ ռազմավարության շրջանակներում պետք է ներկայացնել այս համակարգի կիրառելիության արդյունքները և ազդեցության գնահատումը ևս: Ի լրումն, որ այս հատվածում առաջարկում ենք նշել նաև այն հիմնական պատճառներն ու մարտահրավերները, որոնք խոչընդոտել են նշված ազդարարման համակարգի ամբողջական կիրառմանը: Առաջարկում ենք նաև սահմանել էլեկտրոնային հաղորդման անանուն հարթակի գործարկման հստակ ժամկետներ:
- 7) Խոսելով Ռազմավարության նախագծի 5-րդ կետով ներկայացված նախորդ՝ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքների մասին, առաջարկում ենք դրա շրջանակներում ներկայացնել Պետություն-Քաղաքացիական հասարակության երկխոսության համապարփակ արդյունքները՝ անդրադառնալով երկխոսության

արդյունավետությանը և արձանագրած արդյունքներին: Հիշյալը նաև կվկայի պետություն-քաղաքացիական հասարակության երկխոսության վերաբերյալ պետության գնահատականի և կոռուպցիայի դեմ պայքարում հանրության մասնակցության մասին: Բացի այդ, այս հատվածում խնդրում ենք ուղղել հակակոռուպցիոն կոալիցիայի անվանումը, նշելով՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա:

- 8) Առաջարկում ենք խնդիրների և միջոցառումների շարքում նախատեսել նաև մասնագիտացված քաղաքացիական կարողությունների զարգացումը, քանի որ, ինչպես արդեն նշվել է, կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր է նաև մասնագիտացված քաղաքացիական մասնակցությունը: Վերջինս բխում է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջներից³: Այս մասով համապատասխան առաջարկներ ներկայացվել են սույն փաստաթղթի մյուս մասերում:
- 9) Ռազմավարության նախագծի շրջանակներից դուրս է մնացել հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ մոտեցումները, թեպետ այն համարվում է ռազմավարության հիմնական ուղղություններից մեկը, որը ևս առաջարկում ենք նախատեսել: Այս մասով համապատասխան առաջարկներ ներկայացվել են սույն փաստաթղթի մյուս մասերում:
- 10) Ի լրումն ներկայացված առաջարկների, գտնում ենք, որ պետք է ապահովվի Նոր ռազմավարության նախագծի տարբեր հատվածների միջև սիներգիան¹՝ նախատեսելով փոխլրացումներ և փոխօգնություններ մեխանիզմների և միջոցառումների միջև: Միաժամանակ առաջարկում ենք սիներգիան ապահովել այլ ռազմավարությունների հետ նույնպես²՝ շրջանցելով նույնանման դրույթների կրկնությունը սույն ռազմավարության և այլ գերատեսչական փաստաթղթերի (այդ թվում՝ տարեկան, եռամյա կամ հնգամյա ծրագրեր, ռազմավարական փաստաթղթեր, գործողությունների ծրագրեր և այլն) հետ, ներառյալ՝ հանրային ծառայության, դատախարակական համակարգի և այլ ոլորտներին վերաբերող ռազմավարությունների հետ:
- 11) Ռազմավարության նախագծով կամ Նախագծով առաջարկվող նոր կառուցակարգերի ներդրմամբ բացակայում է հիմնավորում, հատկապես՝ ուղեկցված միջազգային փորձով, թե ինչպես է որոշվել այս կամ այն մեխանիզմի ներդրումը: Օրինակ՝ Կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման գործառույթները գործող մեկ մարմնում կենտրոնացնելու կամ նոր մարմին ստեղծելու և վերջինիս վերապահելու հարցի դիտարկման միջոցառումը: Ուստի, առաջարկում ենք, որ Ռազմավարության նախագծով կամ Նախագծով նոր կառուցակարգերի նախատեսման դեպքում տրամադրվի հիմնավորում՝ ուղեկցված միջազգային փորձով:

³ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf :

Գ) ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1) Նոր ռազմավարության նախագծում նախատեսված ռազմավարության մոնիթորինգը և գնահատումը հիմնված չեն **Կուալա Լուումպուրի այնպիսի կարևորագույն սկզբունքների, որոնք են՝**

ա. Ռազմավարության մշակման անբաժանելի մաս. Մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունների անբաժանելի մասն են: Գնահատման տարրերը և տվյալների հավաքման համակարգերը պետք է ներառվեն ռազմավարությունների մեջ հենց նախագծման փուլում:

բ. Հստակ հենակետերով և թիրախներով ցուցանիշներ. Հստակ սահմանված հենակետերով և դրանց հետևելու մեխանիզմներով չափելի ցուցանիշներ են անհրաժեշտ՝ սահմանելու համար թիրախային նպատակների նվաճումը:

Նոր ռազմավարության նախագծում բավարար ուշադրություն չի դարձվել **«Մոնիթորինգի համակարգ»** բաժնին, և մեր գնահատմամբ թե՛ Ռազմավարության նախագծով, և թե՛ դրա իրականացման միջոցառումների ծրագրով սահմանված 2 միջոցառումները (61-62-րդ) չեն կարող մոնիթորինգի իրականացման արդյունավետ մեխանիզմներ երաշխավորել: Ըստ Կուալա Լուումպուրի հայտարարության՝ մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունների անբաժանելի մասն են և գնահատման տարրերն ու տվյալների հավաքման համակարգերը պետք է ներառվեն ռազմավարությունների մեջ հենց նախագծման փուլում:

Մեթոդական հրահանգի համաձայն՝ Ռազմավարական փաստաթղթերի բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջներից է արդյունքային ցուցանիշների սահմանումը: Մասնավորապես, որոշման՝ 41-րդ կետի համաձայն՝ **ռազմավարական նպատակների համար պետք է սահմանվեն իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, որոնք հետագայում հիմք կհանդիսանան ծրագրերի նպատակների չափման, առաջընթացի և արդյունավետության գնահատման համար:**

Մեթոդական հրահանգի 42-րդ կետի համաձայն՝ **«Հիմնական արդյունքային ցուցանիշները դրանք այն հիմնական բնութագրերն են, որոնց միջոցով գնահատվում և չափվում է նպատակների իրականացումը: (...): Սյնուհետև, 43-րդ կետը սահմանում է. «Ռազմավարական փաստաթղթերում արդյունքների ցուցանիշները սահմանելիս, դրանցից յուրաքանչյուրի գծով պարտադիր պետք է սահմանվեն ինչպես **համապատասխան թիրախային, այնպես էլ դրանց բազային ցուցանիշները: Բազային ցուցանիշները նկարագրում են համապատասխան ցուցանիշի այն փաստացի մակարդակը, որի նկատմամբ սահմանվել****

են թիրախային ցուցանիշները և որի նկատմամբ նաև հետազայում գնահատվելու է համապատասխան արդյունքի գծով առաջընթացը: **Թիրախային ցուցանիշներն** արտահայտում են համապատասխան ցուցանիշի նպատակային (ցանկալի) մակարդակը, որին ձգտում է հասնել պետությունը համապատասխան միջամտությունների միջոցով: (...):

Առաջարկում ենք

- 1) Նոր ռազմավարության նախագծի լրամշակման փուլում **վերանայել ռազմավարության մոնիթորինգի և գնահատման համակարգը՝ դրանք համապատասխանեցնելով Կուալա Լումպուրի հայտարարությանը և Մեթոդական հրահանգի պահանջներին:**
- 2) Նախատեսել եռամսյա, վեցամսյա, մեկ տարվա և ամբողջ ժամանակահատվածի համար արդյունքային ցուցանիշներ, որոնք կարտացոլեն ոչ միայն միջոցառման փաստացի կատարողականը, այլև՝ ազդեցության գնահատումը:
- 3) Նախատեսել պետական բյուջեից միջոցներ՝ ՔՀԿ-ների անկախ փորձագետների կողմից ռազմավարության և դրա միջոցառումների ծրագրի մոնիթորինգի իրականացման նպատակով:

**II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ**

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) միջոցառումների վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1) Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում (Միջոցառում 1):

ՏՀԶԿ զեկույցի ներկայացված 1-ին առաջարկության, որ վերաբերում է հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերին, 4-րդ կետում նույնաբովանդակ առաջարկության մասին է խոսք գնում: Սակայն ՏՀԶԿ զեկույցում նշվում է, որ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ հարցումներ պետք է անցկացվեն նաև հակակոռուպցիոն ռազմավարությունների մոնիթորինգի իրականացման փուլում:

Առաջարկում ենք.

- i. **Նախագծով նախատեսված միջոցառման մեջ ներառել հարցումների անցկացում նաև հակակոռուպցիոն ռազմավարությունների մոնիթորինգի իրականացման փուլում:**
- ii. **Դիտարկել վերոնշյալ հարցումների իրականացումը հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին պատվիրակելու նպատակահարմարության հարցը և նախագծով որպես այդ միջոցառման իրականացման պատասխանատու մարմին նախատեսել նրանց:**

2) Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում (Միջոցառում 2):

ՏՀԶԿ զեկույցի 1-ին առաջարկության 5-րդ կետում խոսք է գնում նույնաբովանդակ առաջարկության մասին, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ պարզ չէ, թե ինչ մեթոդաբանությամբ է իրականացվելու ռիսկերի գնահատումը, և ովքեր են գնահատելու բարեվարքության գործողությունների ծրագրերի իրականացման արդյունավետությունը: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու է սահմանված առնվազն 5 մարմնում ռիսկերի գնահատումների հիման վրա մշակված ներքին բարեվարքության ծրագրեր, քանի որ, մեր

խորին համոզմամբ, այն կարող է բերել կառավարման համակարգի ոչ ներդաշնակ աշխատանքին:

Առաջարկում ենք.

- i. Նախագծի վերոնշյալ միջոցառման իրականացման քայլերի հաջորդականությունը հնարավորինս որոշակիացնել՝ քանական և որակական արդյունքային ցուցանիշներ ունենալու համար.*
- ii. Միջոցառումը նախատեսել բոլոր մարմինների համար, ոչ թե՛ միայն 5:*

3) 15,000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում (Միջոցառում 3):

Միջոցառումը նախագծում ներառվել է հակակոռուպցիոն նոր ռազմավարության վերաբերյալ 2018 թվականի հունիսի 11-ին ՀՀ արդարադատության նախարարությունն Կոալիցիայի և ԻՀԱ-ի N 02/10 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) ներկայացված առաջարկության հիման վրա: Սակայն պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է որպես թիրախ ընտրվել 15,000 և ավել բնակչություն ունեցող համայնքները: Ավելին, եթե համապետական մակարդակում իրականացվող հակակոռուպցիոն ռազմավարությունը ֆինանսավորվելու է հիմնականում պետական բյուջեի միջոցների հաշվին, ապա Նախագծից պարզ չի դառնում, թե համայնքներում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերը արդյոք ֆինանսավորվելու են պետական բյուջեից, թե՛ համայնքային բյուջեներից: Եթե այդ ծրագրերի իրականացումը պետական ֆինանսավորմամբ է իրականացվելու, ապա Նախագծով հստակ պետք է նշվի դրա մասին, ինչպես նաև Նախագծով պետական ծախսերի վրա ազդեցության նախնական գնահատականներ տրվի՝ համաձայն Մեթոդաբանական հրահանգի պահանջների:

Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարության համաձայն՝ հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է ունենան **ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունություն**, ինչպես նաև հաշվի պետք է առնվեն իրականացման կարողությունները, հետևաբար եթե վերոնշյալ միջոցառումն իրականացվելու է պետական բյուջեի միջոցների հաշվին և ներդրվելու այդ համայնքերում, ապա Նախագծից պարզ չի դառնում, թե ինչպիսի՞ կառույցներ են ներգրավված լինելու համայնքներում կոռուպցիոն ռիսկերի վերհանման, ծրագրերի մշակման, մոնիթորինգի իրականացման գործընթացներում, քանի որ համայնքների կարողությունները՝ այդպիսի ծրագրեր մշակելու, իրականացնելու և արդյունավետությունը երաշխավորելու հարցերում խիստ սահմանափակ են:

Առաջարկում ենք.

- i. Հստակ սահմանել, թե հիշյալ միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հասկացվելու են պետական, թե համայնքային բյուջեի միջոցների հաշվին:*
- ii. Վերանայել միջոցառման իրականացման պատասխանատու մարմինների ցանկը՝ ներառելով նաև հակակոռուպցիոն ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների (համաձայնությամբ):*
- iii. Նախագծով նախատեսել մունիցիպալ հակակոռուպցիոն ռազմավարությունների կամ պլանների մոդելային տարբերակների մշակման վերաբերյալ միջոցառում և նախատեսել պիլոտային եղանակով փորձարկում նախապես ընտրված համայնքներում, ինչպիսիք առկա են Չեխիայում, Լեհաստանում և այլն:*

4) Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի շրջանակներում ստեղծված դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում (Միջոցառում 4):

Նշյալ միջոցառման ակնկալվող արդյունքներ բաժնում սահմանված է. «Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդն հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների իրականացման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով իրականացնում է դոնորների համակարգման հանդիպում, արդյունքների հրապարակում»:

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարում ունիվերսալ անկախ մարմին ունենալու մեր տեսլականը՝ գտնում ենք, որ վերջինիս ստեղծմամբ պետք է հակակոռուպցիոն խորհուրդը դադարեցնի իր գործունեությունը, և վերոնշյալ լիազորությունը, ի թիվս այլոց, փոխանցվի հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմնին:

Առաջարկում ենք

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի շրջանակներում ստեղծված դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովման գործառույթը տրամադրել կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ անկախ մարմնին:

5) Թրանսփարենսի ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթվի բարելավում 15 միավորով (Միջոցառում 5):

Նշված միջոցառման առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ պարզ չէ, թե որն է լինելու այն քայլերի հաջորդականությունը, որը պետք է երաշխավորի տարեկան կտրվածքով

կոռուպցիայի ընկալման համաթվի 5 միավորով բարելավումը, և ինչ հիմնավորմամբ է համաթվի բարելավման այդպիսի միավոր ընտրվել: Մինևույն ժամանակ անհասկանալի է, թե ինչու է որպես միջոցառման համար պատասխանատու մարմին նախատեսել ՀՀ արդարադատության նախարարությանը, այն դեպքում, երբ Նախագծով նախատեսված միջոցառումների կատարման պատասխանատու մարմինները տարբեր են, հետևաբար, այդ մարմինների կողմից իրականացված միջոցառումների արդյունքներով է նաև, որ համաթվի բարելավում ենք ունենալու:

Առաջարկում ենք՝

- i. Ներկայացնել հիմնավորում, թե ինչու է որպես միավոր ընտրվել 15:*
- ii. Ներկայացնել քայլերի հաջորդականությունը, թե ինչպես է սույն միջոցառումն իրականացվելու:*
- iii. Վերանայել պատասխանատու մարմինն:*

6) «ՀՀ Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների նախատեսում (Միջոցառում 6):

Կուլալա Լուսինյանի հայտարարության մեջ, որպես կարևորագույն սկզբունք, նշվում է, որ հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է ունենան **ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունություն**: Իսկ ՏՀԶԿ զեկույցի 1-ին առաջարկության 6-րդ կետում նշվում է, որ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումները պետք է ուղեկցվեն իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորմամբ:

Մեթոդաբանական հրահանգի պահանջների համաձայն՝ ռազմավարություններին առնչվող ծախսային գնահատականները պետք է սահմանվեն ոչ միայն ողջ ռազմավարության, այլ նաև դրա շրջանակներում իրականացվելիք նպատակների և/կամ ռազմավարական ծրագրերի/միջոցառումների մակարդակով, որոնք այնուհետև **բյուջետային ծրագրերի միջոցով** պետք է փոխանցվեն բյուջետավորման համակարգ և հիմք հանդիսանան ՄԺԾԾ և բյուջետային հատկացումների սահմանման համար:

Առաջարկում ենք՝

Հիշյալ միջոցառումը հանել Նախագծից, հաշվի առնելով այն հանգամանքները, որ յուրաքանչյուր միջոցառման համար առանձին սյունակում նշվում է ֆինանսավորման աղբյուրը, և եթե միջոցառման իրականացման համար ֆինանսավորումն իրականացվելու է պետական բյուջեի միջոցներով, ապա դրա համար պատասխանատու մարմինն իր տարեկան բյուջետային հայտով ներկայացնելու և ստանալու է համապատասխան ֆինանսական միջոցները:

7) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծում և բնականոն գործունեության ապահովում (Միջոցառում 7)

Կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման գործառույթները գործող մեկ մարմնում կենտրոնացնելու կամ նոր մարմին ստեղծելու և վերջինիս վերապահելու հարցի դիտարկում (Միջոցառում 52, ըստ նախագծի վրիպակի՝ 51)

Մի կողմից, նշյալ միջոցառումն իրականացվելու է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի ուժով, հետևաբար բացակայում է անհրաժեշտությունը սույն միջոցառումը նման ձևակերպմամբ Նախագծում ներառելու համար:

Մյուս կողմից, Նախագծի 51-րդ կետով նախատեսված է կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման գործառույթները գործող մեկ մարմնում կենտրոնացնելու կամ նոր մարմին ստեղծելու և վերջինիս վերապահելու հարցի դիտարկում:

Հիշյալ երկու կետերով նախատեսված միջոցառումների վերլուծությունից չենք կարող եզրահանգել, որ Նոր ռազմավարության նախագծով առաջարկվում է անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի ստեղծում, որն օժտված կլինի

- կոռուպցիայի կանխարգելման,
- հակակոռուպցիոն կրթության և
- նախնական քննության և օպերատիվ-հետախուզական գործառույթներով և լիազորություններով:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն իր հրապարակային ելույթներում բազմիցս փաստել է անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմին ունենալու անհրաժեշտության մասին:⁴ Ավելին, նշյալ մոդելի ընտրությունն արտացոլված է ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի հունիսի 25-ին ԱԺՌ-006-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրում՝ *«Կոռուպցիայի (...) դեմ պայքարում էական նշանակություն կարող է ունենալ մասնագիտացված, անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, որը ոչ միայն հնարավորություն կունենա իրականացնելու մշտադիտարկում, վերահսկողություն և ուսումնասիրություններ, այլև օժտված կլինի օպերատիվ-հետախուզական, հետաքննական և նախաքննական գործառույթներ իրականացնելու իրավասությամբ»*: ՀՀ

⁴Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://iravaban.net/206438.html> :

կառավարության ծրագրի վերոնշյալ պահանջների կատարմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշման N 1 հավելվածի 59-րդ կետի 3-րդ ենթակետով: Բացի այդ, եթե Նոր ռազմավարության նախագծով ինչ-որ ձևով անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի կողմից իրականացվող երկու հիմնական գործառույթների վերաբերյալ անդրադարձ է կատարվել, ապա նույնը չենք կարող ասել հակակոռուպցիոն կրթության ներդրման և դրա իրականացման համար պատասխանատու լիազոր մարմնի վերաբերյալ: **Միջազգային լավագույն փորձը ևս վկայում է (Հոնգ Կոնգ, Սինգապուր, Լատվիա, Լիտվա և մի շարք այլ երկրներ) կոռուպցիայի դեմ պայքարում նման մոդելի արդյունավետության մասին:**

Առաջարկում ենք՝

- i. Հանել վերոնշյալ երկու միջոցառումները նախագծից:***
- ii. Շրանց փոխարեն նախատեսել անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի ստեղծման միջոցառում, որն օժտված կլինի կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և նախարհնության, հետաքննության ու օպերատիվ-հետախուզական գործառույթներով:***

8) Հանրային ծառայության օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ստեղծում և գործարկում (Միջոցառում 8):

ՏՀԶԿ զեկույցի 6-րդ առաջարկության 1-3-րդ կետերով առաջարկվում է ավարտին հասցնել էթիկայի հանձնաժողովների պատշաճ գործունեության ապահովման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր ստեղծելու գործընթացը, ապահովել որպեսզի էթիկայի հանձնաժողովները և բարեվարքության հարցերով կազմակերպիչները տիրապետեն համապատասխան կարողությունների և գործնականում դրանք կարողանան կիրառել, մեթոդական աջակցություն ցույց տալ նրանց, ինչպես նաև այդ հանձնաժողովների գործունեությունը մոնիթորինգի ենթարկելու համար մեխանիզմներ սահմանել:

Որպես միջոցառման իրականացմամբ ակնկալվող արդյունք նախատեսվում է. ***«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծվել են էթիկայի հանձնաժողովներ»:*** Այդ առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-206-Ն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային***

ծառայության համար ստեղծվելու են էթիկայի առանձին հանձնաժողովներ, իսկ նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի հանրային ծառայության պաշտոն: Բացի այդ՝ որպես Նախագծով վերոնշյալ միջոցառման իրականացման պատասխանատու մարմին նախատեսվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշվածը պետական ծառայության առանձին տեսակների, ինչպես նաև համայնքային ծառայության լիազոր մարմին չի հանդիսանում:

Առաջարկում ենք

Նախագծից հանել սույն միջոցառումը՝ անընդունելի համարելով այլ իրավական ակտերով և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած այլ ռազմավարական փաստաթղթերով արդեն իսկ նախատեսված միջոցառումների ներառումը Նախագծում:

9) Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների կարողությունների զարգացում (Միջոցառում 9):

Վերոնշյալ միջոցառման շրջանակներում նախատեսվել է ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանման և ՀՀ վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների պարբերաբար վերապատրաստում: Սակայն, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և դրա իրականացման ընթացքում զգալի ներգրավվածություն ունեցող այլ դերակատարների, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնագիտացված հետաքննող լրագրողների և լրատվամիջոցների կարողությունների զարգացմանը միտված որևէ միջոցառում չի նախատեսվել, մինչդեռ քաղաքացիական հասարակության ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում նախատեսված է՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններով՝ հակակոռուպցիոն վերապատրաստումների իրականացման եղանակով, որպեսզի վերջիններս ձեռք բերեն կարողություններ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի վերանայման մեխանիզմներին մասնակցելու համար: Բացի այդ, «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում նշվում է, որ քաղաքացիական հասարակության ներգրավումը հակակոռուպցիոն պայքարի բանալին է:

Առաջարկում ենք

Նախատեսել միջոցառում՝ կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՋԼՄ-ների կարողությունների զարգացման վերաբերյալ:

10) Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման շուրջ կոնսենսուսի ձևավորում (Միջոցառում 10):

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման շուրջ կոնսենսուսի ձևավորումն ունի անկյունքարային նշանակություն: Այդ մասին է վկայում նաև միջազգային լավագույն փորձը: Այսպես, **Կուալա Լումպուրի** հայտարարության մեջ նշվում է, որ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործընթացում շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածությունն իրավունքի հիմունքներ է ստեղծում և օգնում ապահովել որդեգրված ռազմավարությունների ընդունելիությունը և արդյունավետությունը: Պետական կառույցները (գործադիր, օրենսդիր և դատական) պետական և ենթապետական մակարդակներում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, մասնավոր սեկտորը, մեդիան, մասնագիտական հանրությունները, առևտրային և արդյունաբերական միավորումները և արհմիությունները, ակադեմիական հաստատությունները, երիտասարդական և մշակութային կազմակերպությունները կարող են ծառայել որպես կարևոր դաշնակիցներ և գործընկերներ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործում և կարող են կրճատել բարեփոխումներին ուղղված ջանքերի խոցելիությունը քաղաքական ղեկավարությունում փոփոխությունների հանդեպ: Հիշյալ հայտարարության մեջ նշվում է նաև, որ համաձայնություն պետք է ստեղծվի ռազմավարությունների ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ: **ՏՀԶԿ զեկույցի** 1-ին առաջարկության 1-ին կետում նույնպես նշված է, որ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը պետք է մշակվեն շահագրգիռ կողմերի լայն շրջանակի մասնակցությամբ և հիմնված լինեն կարիքների և ռիսկերի գնահատման վրա:

Սակայն, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման շուրջ կոնսենսուսի ձևավորումը, մեր խորին համոզմամբ, իրենից չի ենթադրում որոշակի առանձին միջոցառում, այլ՝ համալիր մոտեցում Ռազմավարությամբ նախատեսված բոլոր միջոցառումների համար:

Մինչդեռ, ներկայացված Նախագծում քիչ տեղ է հատկացված իրականացվելիք միջոցառումներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների մասնակցությանը:

Առաջարկում ենք.

- i. Սույն միջոցառումը հանել Նախագծից:
- ii. Նախատեսել և հնարավորինս ընդլայնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՋԼՄ-ների մասնակցությունն ու դերակատարությունը: Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման բոլոր փուլերում՝ սկսած հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, փաստաթղթերի քննարկման և փորձաքննության, հանրային իրազեկման և կրթական ծրագրերի իրականացման, վերջացրած իրականացվող միջոցառումների մշտադիտարկման և գնահատման փուլով:

11) **Մարդկային ռեսուրսների կառավարման նոր տեղեկատվական համակարգի ներդրում և գործնական կիրառում (Միջոցառում 11):**

Թեև ՏՀԶԿ զեկույցի 4-րդ առաջարկության 1-ին կետով առաջարկվում է ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման նոր տեղեկատվական համակարգ և սկսել դրա գործնական կիրառումն ամբողջ հանրային ծառայության համար, հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ միջոցառման մեջ և՛ բուն միջոցառումը, և՛ ակնկալվող արդյունքը, և՛ վերստուգիչ ցուցանիշը նույնացված են, հետևաբար այն ենթակա է խմբագրման: Բացի այդ, 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքով արդեն իսկ նախատեսվում է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի ստեղծում, որն էլեկտրոնային ծրագիր է և կառավարվելու է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից:

Առաջարկում ենք

Անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով Նախագծից հանել հիշյալ միջոցառումը:

12) **Փուլային եղանակով քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացում (Միջոցառում 12):**

ՏՀԶԿ զեկույցի 9-րդ առաջարկության 1-ին կետով առաջարկվում է բարձրացնել քաղաքացիական ծառայության աշխատողների վարձատրության մրցունակությունը: Առաջարկվում է նաև ընդհանուր վարձատրության չափի մեջ սահմանափակել պարզևավճարների տեսքով փոխհատուցումների տրամադրման ծավալը և ապահովվել, որպեսզի պարզևավճարներ տրամադրվեն միայն կատարողականների հիման վրա՝ հստակ և օբյեկտիվ չափանիշներով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիշյալ միջոցառման մեջ բարձրացվող աշխատավարձի հստակ չափ չի նշվել, ինչն էլ հնարավորություն չի տալիս գնահատելու միջոցառման քանակական և որակական ցուցանիշները:

Բացի այդ, Հայաստանում աշխատավարձերի պետական կարգավորման հիմնական գործիքը նվազագույն աշխատավարձն է, որի **հետևողական բարձրացման հնարավորության քննարկման վերաբերյալ** առանձին միջոցառում է նախատեսված ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշմամբ հաստատված **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության ..միջոցառումների ծրագրով»:**

Առաջարկում ենք

Նախագծից հանել հիշյալ միջոցառումը՝ կրկնություններից խուսափելու նպատակով:

- 13) **«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում (Միջոցառում 13):**

ՏՀԶԿ զեկույցի 12-րդ առաջարկության 1-ին կետով առաջարկվում է օրենքով սահմանված կարգով ընդունել վարքագծի կանոններ կամ էլ վերանայել գործող կանոնները, ինչը հիմք կհանդիսանա էթիկայի կանոնների պահպանման, ինչպես նաև դրանց ուսուցման համար: Իսկ 2-րդ կետով առաջարկվում է ամբողջ հանրային ծառայության համար պարբերական և համակարգված էթիկայի դասընթացներ անցկացնել:

ԳԲԵԿՈ-ի առաջարկություններով նույնպես առաջարկվել է զգալիորեն ամրապնդել էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը, ինչպես նաև Եվրոպական միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով նույնպես նախատեսվել է բարձր էթիկական ստանդարտների ապահովում՝ հանրային գործընթացների ղեկավարման ընթացքում:

Նշյալ միջոցառման իրականացման ակնկալվող արդյունքում պարզ չէ, թե ինչու է «2021թ.» այունակում տեղ գտել *«Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոններն են»* ձևակերպումը, քանի որ այն իրենից որակական և քանակական արդյունքային ցուցանիշ չի ներկայացնում՝ ի տարբերություն նույն միջոցառման «2019թ.» և «2020թ.» այունակներում տեղ գտած ցուցանիշների: Բացի այդ, այդպիսի միջոցառում արդեն **իսկ նախատեսված է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի**

11-ի «Հանրային ծառայության մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 756-Ս որոշման N 2 հավելվածի 5-րդ կետով:

Առաջարկում ենք

Նախագծից հանել հիշյալ միջոցառումը՝ անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով:

14) Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի բնականոն գործունեության ապահովում (Միջոցառում 14):

ՏՀԶԿ զեկույցի 11-րդ առաջարկության 1-ին կետով առաջարկվում է օրենքի պահանջներին համապատասխան ապահովել ակտիվների հայտարարագրերի համակարգային, անկողմնակալ, հետևողական և օբյեկտիվ վերլուծություն և հետևողական վերահսկողություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ 3-րդ կետով առաջարկվում է ապահովել, որպեսզի ստուգող մարմինը հասանելիություն ունենա պետական մարմիններին հասանելի բոլոր տեղեկություններին և տվյալների բազաներին և ունենա իր մանդատը լիարժեք կատարելու անհրաժեշտ գործիքներ: Մինչև ժամանակ գտնում ենք, որ հայտարարագրման համակարգի գործունեության ապահովումը նույնպես իրականացվելու է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի ուժով, ուստի առկա չէ անհրաժեշտություն նման ձևակերպմամբ միջոցառում նախատեսել:

Մյուս կողմից, հայտնում ենք, որ Կոալիցիան և ԻՀԱ-ն Գրության շրջանակներում նույնպես առաջարկել էր գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի բարելավման ուղղված միջոցառում, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ հիշյալ միջոցառման

Առաջարկում ենք

- i. Վերանայել և քննարկել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը.*
- ii. Վերանայել և քննարկել հայտարարատու պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց ցանկը.*
- iii. Վերանայել հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսված պատժամիջոցները.*
- iv. Վերանայել հայտարարագրման առարկան, այդ թվում՝ հայտարարագրման առարկայում ներառել նաև ակտիվ չհանդիսացող ծախսերը, վերանայել թանկարժեք գույքի հայտարարագրման ֆինանսական շեմը.*
- v. Վերանայել հրապարակայնության ապահովման պահանջները, ներառյալ՝ նվիրատվությունների տրամադրման ժամանակ.*

vi. Վերանայել հայտարարագրերի վերլուծությամբ գրադվող մարմնի յիսգորությունները, այդ թվում՝ տրամադրելով ցանկացած քաղաքացուց ad hoc հայտարարագիր պահանջելու հրավասություն.

vii. Վերանայել հայտարարագրերի հրապարակման կայքը՝ հնարավորություն ընձեռելով որոնումներ կատարել քատ կոնկրետ ակտիվի և շահի:

15) Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության ուսումնասիրություն (Միջոցառում 15):

Հայտնում ենք, որ այս առաջարկությունը տեղ է գտել նախագծում Կոալիցիայի և ԻՀԱ-ի Գրության շրջանակներում: Մինևույն ժամանակ, ցանկանում ենք նշել, որ սույն առաջարկությունը միայն մասնակի է տեղ գտել նախագծում, քանի որ առաջարկությունները եղել են ավելի լայն՝ ընդգրկելով կոռուպցիոն ռիսկերն ամբողջ ընտրական գործընթացում:

Առաջարկում ենք.

- i. Նախատեսել ընտրություններին մասնակցությունը որպես պարտականություն, ոչ թե՛՝ հրավունք, որի վերաբերյալ առկա է բավականին տարածված միջազգային փորձ,*
- ii. Վերանայել վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ կարգավորումները և խստացնել պատասխանատվության միջոցները,*
- iii. Վերանայել ընտրատեղամասերի շուրջ քարոզչության իրականացման կարգավորումները և խստացնել պատասխանատվության միջոցները,*
- iv. Վերանայել լոբբիստական գործունեությանը վերաբերող ժամանակահատվածը և կրճատել:*

16) Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) շրջանակում ստանձնած պարտավորությունների շարունակական իրագործում (Միջոցառում 16): Հանրագրերի էլեկտրոնային www.e-petition.am համակարգի ներդնում և գործարկում, իրազեկման աշխատանքների իրականացում (Միջոցառում 21):

ՀՀ կառավարությունը 2018 թվականի նոյեմբերի 15-ի նիստում հաստատել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը» որում հստակ շարադրված են նշված նախաձեռնության շրջանակներում իրականացվելիք միջոցառումները, դրանց կատարման ժամկետները, պատասխանատու մարմինները և այլն: Թեև Կուալա Լումպուրի

հայտարարության մեջ նշվում է, որ **հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է հաշվի առնեն և կապեր հաստատեն այլ համապատասխան պետական ծրագրերի հետ** (օր.՝ դատական ոլորտի, հանրային կառավարման բարեփոխումներ, բաց կառավարում և այլն), **սակայն դա չի նշանակում, որ դրանք պետք է թողակցվեն իրար**: Անկախ Նախագծում ներառելու կամ չներառելու հանգամանքից, ԲԿԳ չորրորդ ծրագրով հաստատված միջոցառումները, որպես ՀՀ կառավարության կողմից ստանձնած միջազգային հանձնառություն, պետք է իրականացվեն պատասխանատու գերատեսչությունների կողմից, ուստի առկա չէ անհրաժեշտություն Նախագծում սահմանել դրանց կատարումը որպես առանձին միջոցառում:

Բացի այդ, ԲԿԳ-ին վերաբերող նշված ծրագրով նախատեսված միջոցառումներից երկուսը տեղ են գտել նաև Նախագծում (Նախագծի 21-րդ և 28-րդ միջոցառումներ, որոնք համապատասխանաբար վերաբերվում են Հանրագրերի էլեկտրոնային www.e-petition.am համակարգին և Իրական սեփականատերերի գրանցամատյանին): Այդ առնչությամբ պարզ չէ, թե ԲԿԳ չորրորդ ծրագրից այդ միջոցառումներն ի՞նչ հիմնավորմամբ են ներառվել տվյալ Նախագծում, որոնց կանդիդատնանք առանձին: Բացի այդ, եթե իրական սեփականատերերի ինստիտուտին վերաբերող միջոցառման հետ կապված առկա է անհրաժեշտություն ավելի խորացված մակարդակով միջոցառում նախատեսել նաև սույն Նախագծով, ապա այն իսպառ բացակայում է հանրագրերի համակարգի հետ կապված:

Առաջարկում ենք

- i. Նախագծից հանել 16-րդ միջոցառումը՝ անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով:**
- ii. Նախագծից հանել 21-րդ միջոցառումը՝ անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով:**

17) Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու գործընթացի հրապարակայնության ապահովում (Միջոցառում 17):

Թեև սույն միջոցառումը բխում է ՏՀԶԿ-ի զեկույցի տեղ գտած 19-րդ առաջարկությունից, սակայն նախ սույն զեկույցով նախատեսված են նաև մի շարք այլ առաջարկություններ: Բացի այդ, որպես միջոցառման ակնկալվող արդյունք, նշվում է տեղեկատվության պարբերաբար թարմացումն ու հրապարակումը: Այդ առնչությամբ, գտնում ենք, որ այսպիսի միջոցառումը կարող էր տեղ գտնել, օրինակ, գնումների գործընթացի համար պատասխանատու լիազոր մարմնի տարեկան գործունեության ծրագրով: Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ

միջոցառման իրականացմամբ ակնկալվող արդյունքն իր մեջ քանակական և որակական որևէ ցուցանիշ չի պարունակում, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու, թե միջոցառման իրականացման արդյունքում գնումների գործընթացում ինչ էական առաջընթաց ենք արձանագրելու:

Կոալիցիայի և ԻՀԱ-ի Գրության շրջանակներում գնումների ոլորտի բարելավման նպատակով ներկայացվել էին մի շարք առաջարկներ, որոնք խարսխված էին հետևյալ փաստաթղթերի պահանջներով.

- Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով,
- Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով,
- Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով:

Առաջարկում ենք

- Վերաձևակերպել սույն առաջարկը հետևյալ կերպ՝ «Պետական գնումների համակարգի բարելավում»,**
- Բացի գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու միջոցառումից, շեշտադրում կատարել գնումների գործընթացի վերաբերող նաև այլ առաջնահերթությունների վրա և որպես ենթամիջոցառումներ նախատեսել հետևյալը՝**
 - ✓ *մշտական մշտադիտարկման ենթարկել մեկ գնորդից կատարվող, ինչպես նաև մրցակցային հիմունքներով իրականացվող հանրային գնումները,*
 - ✓ *հնարավորինս կրճատել մեկ գնորդից իրականացվող գնումները և ամրապնդել վերջինիս նկատմամբ վերահսկողությունը,*
 - ✓ *ապահովել Գնումների բողոքարկման խորհրդի գործունեության անկախությունը, պրոֆեսիոնալիզմը, պատշաճ բյուջետավորումը և հաստիքացանկը:*

18) Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում (Միջոցառում 18):

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սույն առաջարկությունը բխում է և ՏՀԶԿ զեկույցից, և՛ Կոալիցիայի և ԻՀԱ-ի Գրությունից: Մասնավորապես, ՏՀԶԿ զեկույցի 20-րդ առաջարկությամբ առաջարկվում է «Հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակելիս առանձնացնել ձեռնարկատիրական բարեվարքությանը նվիրված բաժին, որը հիմնված կլինի ռիսկերի գնահատման վրա և քննարկումներ կանցկացվեն ընկերությունների և տարբեր տեսակի

իրավաբանական անձանց հետ: Հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերվող փաստաթղթեր քննարկելիս ակտիվ կերպով խրախուսել մասնավոր սեկտորի ներգրավվածությունը»:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Նախագիծը նախատեսում է միայն հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր, մինչդեռ վերոնշյալը խիստ կապված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի հետ, որի վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ նախագծով: Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծի 129-րդ հոդվածի համաձայն. «Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 128-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:» Սակայն, արդեն տևական ժամանակահատված է, ինչ սույն նախագծի հետ կապված որևէ առաջընթաց չկա: Նշյալը ևս բխում է ՏՀԶԿ գեկույցից:

Առաջարկում ենք

- i. Սույն միջոցառմամբ նախատեսել նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:**
- ii. Միջոցառման ակնկալվող արդյունքում նախատեսել, որ հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման նպատակով ստեղծվեն օրենդրական համապատասխան հիմքեր:**
- iii. Հստակեցնել միջոցառման իրականացմամբ ակնկալվող որակական և քանակական արդյունքային ցուցանիշները, ինչպես նաև որպես արդյունքային ցուցանիշ նախատեսել, որ Հայաստանում գործարար ոլորտում համապատասխանության ծրագրերը կներդրվեն փուլային եղանակով և մինչև 2022 թվականը՝ այդպիսի ծրագրերի ներդրումը պարտադիր կհամարվի խոշոր առևտրային ընկերություններ համար:**

19) **Գործարար ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում (Միջոցառում 19):**

Թեև ողջունելի է գործարար ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանմանը վերաբերող դրույթի նախատեսումը Նախագծով, սակայն գտնում ենք, որ նշյալ ձևակերպումը խիստ ընդհանուր է, ուստի գտնում ենք, որ առկա է կոնկրետ միջոցառումների նախատեսման անհրաժեշտություն:

Առաջարկում ենք.

- i. Ներդնել և գործարկել շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման ծրագրեր (screens), որը կհանդիսանա մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք: Վերջինիս կիրառման իրավագործությունը միջազգային փորձում տրված է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովներին՝ վերջինիս համար նախատեսելով անկախության երաշխիքներ:
- ii. Վեր հանել հավատարմագրային կառավարման գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերը և քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ: Նշյալ խնդրի լուծումն անհրաժեշտ է, որպեսզի պայքարել բիզնեսի և քաղաքականության սերտաճման, մենաշնորհների և գերիշխող դիրքի դեմ: Այս ուղղությամբ ԵՄ Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ-ն ևս առաջարկում է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները: ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականի կատարումը գնահատել է մասամբ կատարված և ցանկանում է ՀՀ-ի կողմից իրականացված միջոցները որոշ ժամանակ գործողության մեջ դնելուց հետո լրացուցիչ գնահատել իրավիճակը, քանի որ անհամատեղելիության կանոնների գործնականում կիրառումը եղել է հանձնարարականի հիմնական պատճառը: Հնարավոր լուծումներից է հակակոռուպցիոն մարմինների դիտարկումների բաժինների արդյունավետ աշխատանքը:

20) Պետական մասնակցությամբ կամ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում (Միջոցառում 20):

ՏՀԶԿ զեկույցի 20-րդ առաջարկության 4-րդ կետով առաջարկվում է պետությանը պատկանող ձեռնարկությունների բարեվարքությունը երաշխավորելու համար այդ ձեռնարկություններում համակարգային բարեփոխումներ և արդյունավետ հակակոռուպցիոն ծրագրեր իրականացնել, որոնք կբարձրացնեն այդպիսի ընկերությունների հաշվետվողականությունը: Առաջարկվում է նաև այդպիսի ձեռնարկություններում մշակել, իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումներ և մոնիթորինգի ենթարկել դրանք:

Առաջարկում ենք,

- i. Պետական մասնակցությամբ կամ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններում իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումներ և մոնիթորինգի ենթարկել դրանք:*
- ii. Որպես վերոնշյալ միջոցառման արդյունքային ցուցանիշ սահմանել ոչ թե այն, որ մշակվել են պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր, այլ նախատեսել, որ դրանք ընդունվել են:*

21) Լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային եղանակով ստանալու հնարավորության ստեղծում (Միջոցառում 22)

Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի (e-justice.am) մշակում և ներդրում (Միջոցառում 23),

Դատարանների միասնական e-court էլեկտրոնային համակարգի ներդրում և գործարկում (Միջոցառում 25),

Մնանկության կառավարիչների www.e-banruptcy.am էլեկտրոնային հարթակի ներդրում և գործարկում (Միջոցառում 26),

Պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական www.e-verify.am համակարգի ներդրում և գործարկում (Միջոցառում 27),

Քաղաքացիների բողոքների, հարցումների և դիմումների գործադիր իշխանության թեժ գծի միասնական հարթակի (Միջոցառում 29),

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովում (այն է՝ www.e-draft.am հարթակի արդիականացում՝ Միջոցառում 30),

Ամբողջական էլեկտրոնային կառավարման գործուն համակարգի ստեղծում զբաղվածության ոլորտի էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման միջոցով (Միջոցառում 31),

Ընտանիքի սոցիալական գնահատման (սոցիալական դեպքի վարման) տեղեկատվական համակարգի ստեղծում (Միջոցառում 32),

Որդեգրման գործընթացի կանոնակարգում, (որդեգրման ենթակա երեխաների տվյալների տրամադրում, համադրման մեխանիզմների ներդրում) տեղեկատվական համակարգի արդիականացում (Միջոցառում 33)

Որոշումների կայացման գործընթացի ավտոմատացում, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնում, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառների կառավարման համակարգի արդյունավետության բարելավում (Միջոցառում 34)

Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի վճարման ընթացակարգերի կատարելագործում (Միջոցառում 35)

Աշխատանքային գործույկների թվայնացում (Միջոցառում 36)

Մանկապարտեզ հերթագրելու համակարգի էլեկտրոնայնացում (Միջոցառում 38)

Հարկային հսկողության կազմակերպման ընթացքում հայեցողական մոտեցման բացառման մեխանիզմների ստեղծում (Միջոցառում 39)

Մաքսային գործառնությունների ավտոմատացման մակարդակի բարձրացում և մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգում մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային գործառնությունների մասով համակարգում հաշվետվողական նշումների կատարում (Միջոցառում 40)

Հարկային մարմնում հարկային հսկողությունը ամբողջությամբ ռիսկերի կառավարման հիմքերի վրա դնելու, ռիսկերի կառավարման մեխանիզմները կատարելագործելու և ավտոմատացնելու միջոցով հարկային ծառայող-հարկ վճարող շփումների նվազեցում (Միջոցառում 41)

Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և նշված համակարգի հենքի վրա Mygov.am էլեկտրոնային հարթակի ներդրում (Միջոցառում 42)

Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում (Միջոցառում 43)

Վերոնշյալից 23-րդ, 32-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ և 42-րդ միջոցառումները գրեթե նույնությամբ կրկնում են ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» համապատասխանաբար 75-րդ կետով և որոշման N 1 հավելվածի 19-րդ, 12-րդ, 15-րդ, 14-րդ և 295-301-րդ միջոցառումները: Այս պարագայում, իրավամբ, հարց է առաջանում, թե ի՞նչ սկզբունքով են հիշյալ որոշմամբ նախատեսված միջոցառումներն ընտրվել որպես հակակոռուպցիոն միջոցառումներ և նախատեսվել Ռազմավարության նախագծում, քանի որ նույն որոշմամբ սահմանված մի շարք այլ միջոցառումներ (օրինակ՝ 196.4-րդ, 268-269-րդ 274-րդ, 269-րդ և այլն) նախագծում չեն ներառվել:

Ինչ վերաբերվում է **վերոնշյալից 22-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ և 31-րդ միջոցառումներին**, ապա վերջիններս **ամբողջությամբ տեղավորվում են թվային արդարադատություն ունենալու կոնցեպտի շրջանակներում**, սակայն որքանով է նպատակահարմար և հիմնավորված վերոնշյալ միջոցառումների ամբողջական ներառումը Նախագծում: Նման մոտեցմամբ առաջնորդվելիս կարող ենք բախվել մի իրավիճակի, երբ գործադիր իշխանության մարմինների կողմից՝ իրենց գործունեության տարեկան միջոցառումների զգալի մասը՝ այդ թվում՝ **էլեկտրոնային համակարգերի արդիականացմանը կամ վերջիններիս ամենօրյա գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված մի շարք միջոցառումներ** մեխանիկորեն կդիտարկվեն որպես հակակոռուպցիոն միջոցառումներ և տեղ կգտնեն ռազմավարությունում՝ առանց կոռուպցիոն ռիսկերի նախապես վերհանման, դրանց գնահատման և այն արդյունքային ցուցանիշների հստակ ամրագրման, որոնք երաշխավորելու են այդ ռիսկերի էապես նվազումը կամ չեզոքացումը:

Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ **Կուալա Լումպուրի հայտարարությունում** տեղ գտած այն սկզբունքը, որ հակակոռուպցիոն ռազմավարությունների կազման ժամանակ համակարգված և համապարփակ մոտեցում պետք է ցուցաբերվի, ռազմավարությունները պետք է կազմվեն **համընդհանուր ամբողջական մոտեցմամբ՝ մինչև ժամանակ հաշվի առնելով ոլորտին հատուկ անհրաժեշտությունները**, ինչպես նաև **ՏՀԶԿ զեկույցի 1-ին առաջարկության 2-րդ կետը**, որով առաջարկվում է ռազմավարության նախագծում ներառել կոռուպցիայի դեմ պայքարում խոցելի համարվող և առաջնահերթ լուծում պահանջող այնպիսի հավակնոտ միջոցառումներ, որոնցում, արդեն իսկ բացահայտված կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման միջոցներ կսահմանվեն:

Բացի այդ, էլեկտրոնային համակարգերին անդրադառնալիս անհրաժեշտ է խոսել նաև **հուղարկավորության** ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերից և ոչ բարեխիղճ աշխատանքի դրսևորումներից, որոնք հիմնականում կապված են թաղման բյուրոյի աշխատանքի և գերեզմանոցային տարածք հատկացնելու հետ: 2006 թվականին փետրվարի 27-ին ընդունված «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *մահացածի մարմինը (ածյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով)*, իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար՝ *առավելագույնը 12,5 քառակուսի մետր հողատարածք*: Սակայն,

օրենքի այս պահանջը չի կատարվում, քանի որ գերեզմանատների ղեկավարությունը հանգուցյալի հարազատներից գումարներ է վերցնում հողատարածք տրամադրելու համար: Բացի այդ, թաղման բյուրոյում հանգուցյալի հարազատները պաշտոնապես վճարում են մոտ 27.000 ՀՀ դրամ գերեզմանափոսը փորելու համար, սակայն 30.000 դրամ, նույն նպատակի համար, վճարում են նաև գերեզմանատանը: Դրանից գատ, բյուրոյում, ոչ պաշտոնապես, գանձում են նաև 1000 դրամ գերեզմանի վկայական տալու ժամանակ:

Առաջարկում ենք

- i. Նախագծից հանել ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով սահմանված միջոցառումները՝ անընդունելի համարելով Ռազմավարության նախագծի մշակման ժամանակ վերոնշյալ մոտեցմամբ առաջնորդվելու պրակտիկան և անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով.*
- ii. Նախագծով նախատեսված էլեկտրոնային համակարգերի ներդրման ու գործարկմանը վերաբերող վերոնշյալ միջոցառումները ներառել ընդհանուր մեկ միջոցառման մեջ:*
- iii. Էլեկտրոնային համակարգերի ներդրմանը վերաբերող միջոցառմամբ ներդնել և գործարկել նաև էլեկտրոնային համակարգ՝ միտված կոռուպցիոն դրսևորումները վերացնելուն հուղարկավարության գործընթացում, որը կրարտեզագրի նոր անվճար գերեզմանատեղերի տրամադրման համար նախատեսված ազատ հողատարածքներն ու վճարովի հիմունքներով տրամադրվող առավելագույնը 6 քառակուսի մետր հողատարածքները:*

22) Ազդարարման միասնական www.azdararir.am էլեկտրոնային հարթակի ներդրում և գործարկում (Միջոցառում 24)

Ազդարարման համակարգի, ազդարարների պաշտպանության երաշխիքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում (Միջոցառում 56– Ըստ նախագծի վրիպակի 55)

Ազդարարման համակարգին անդրադարձը Նախագծում միանշանակ ողջունելի է: Սակայն, այս կապակցությամբ ցանկանում ենք նշել, որ նախ **ազդարարման** միասնական էլեկտրոնային **հարթակի** ներդրումը և **գործարկումը** բխում է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից, ուստի առկա չէ անհրաժեշտություն Նախագծում դրա վերաբերյալ միջոցառում նախատեսելու համար: Բացի այդ, Նախագծի 56-րդ միջոցառմամբ, որպես ակնկալվող արդյունք, նշվել է ազդարարման համակարգի, այդ թվում՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի վերաբերյալ **չարունակական իրազեկման միջոցառումների իրականացում**: Այդ առնչությամբ

անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նախագծով ազդարարներին պաշտպանելու և խրախուսելու վերաբերյալ որևէ գործուն միջոցառում նախատեսված չէ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ազդարարման համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացման և հանրային իրազեկման ուղղությամբ տարվող աշխատանքների վրա: Ավելին, ազդարարների պաշտպանությունն ու խրախուսումը նախատեսված է Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններում: Բացի այդ, առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվում ԵՆԽՎ-ի Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտեի զեկույցներում:

Առաջարկում ենք

- i. Ազդարարներին վերաբերող միջոցառումները խմբավորել մեկ միջոցառման ներքո.*
- ii. Նշյալ միջոցառումն անվանել ազդարարների պաշտպանության և խրախուսման մեխանիզմների ներդրում.*
- iii. Նախատեսել ֆինանսական խրախուսում ազդարարման համար, ինչպիսի մեխանիզմներ առկա են ԱՄՆ-ում, Հարավային Կորեայում և այլն.*
- iv. ապահովել ազդարարների անվտանգությունը՝ լիազոր և իրավասու մարմին նախատեսելով միայն ՀՀ գլխավոր դատախազությանը՝ վերջինիս տրամադրելով ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին մուտք գործելու բացառիկ իրավասություն.*
- v. ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով անանուն կերպով ազդարարելու հնարավորություն ընձեռել նաև այն ազդարարներին, որոնց ներկայացրած հաղորդումները թեև հանցագործությունների վերաբերյալ չեն, սակայն իրենց բնույթով համապատասխանում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտաքին և ներքին ազդարարումներին,*
- vi. պատրաստել և կիրառել ուղեցույց ազդարարների համար.*
- vii. նախատեսել օրենսդրական կարգավորումներ ազգային անվտանգության համակարգում աշխատող անձանց կողմից կատարված հակաիրավական գործողությունների ազդարարման վերաբերյալ.*
- viii. նախատեսել ազդարարման միասնական հարթակից օգտվելու հնարավորություն այն անձանց համար, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկներում.*

- ix. օրենքի մակարդակով նախատեսել քաղաքացիական կազմակերպությունների կողմից վարվող էլեկտրոնային ազդարարման այլընտրանքային հարթակների ստեղծման հնարավորությունը.*
- x. նախատեսել արտահանձնման արգելք այն երկրների ազդարարների համար, որտեղ ազդարարման իրավունքները պաշտպանված չեն:*

23) Իրական սեփականատերերի գրանցամատյանի ներդրում (Միջոցառում 28)

Նախագծով նախատեսվում է իրական սեփականատերերի գրանցամատյանի ներդրում, որը գրեթե նույնությամբ կրկնում է ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» N 1307-Լ որոշման N 1 հավելվածի 4-րդ կետով սահմանված միջոցառմանը, այն տարբերությամբ, որ հիշյալ ծրագրով նախատեսվում է իրական սեփականատերերի բաց հանրային գրանցամատյանի ներդրում: Մակայն, նշյալ փաստաթղթով նախատեսվում է միմիայն գրանցամատյանի ստեղծում և գործարկում, որի արդյունքում իրավաբանական անձանց իրավունք է տրվում, այլ ոչ թե՝ պարտականություն՝ բացահայտելու իրական սեփականատերերին: Հարկ է նշել, որ գրանցամատյանի ստեղծումն ու գործարկումն արդեն իսկ նախատեսվում է իրականացնել «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) շրջանակներում, որտեղ պիլոտային պարտականություն կսահմանվի միայն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործող իրավաբանական անձանց դեպքում:

Մեր խորին համոզմամբ, նշյալ ինստիտուտի լիակատար ներդրումը կհանդիսանա բիզնեսի և քաղաքականության սերտաճման, մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք: Վերոգրյալի մասին նաև անդրադարձ է կատարվել հետևյալ փաստաթղթերում.

- Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, որում նշված է, որ *կողմերը պարտավորվում են համագործակցել հետևյալ ուղղություններով՝ կոռուպցիայի դեմ պայքար և կանխարգելում՝ միտված իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը՝ առաջնորդվելով ՄԱԿ-ի 2003 թ. «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայով, Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (GRECO) և SՀԶԿ-ի առաջարկություններով,*

- ՏՀԶԿ-ի զեկույցի 20-րդ առաջարկության 7-րդ կետով, որով առաջարկվում է ապահովել աստիճանական և արդյունավետ իրական սեփականատերերի բացահայտում, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ սահմանել իրավաբանական անձանց կողմից իրական սեփականատերերի չբացահայտման համար:
- «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որում կարևորվում է հատկապես իրավաբանական անձանց իրական սեփականատերերի հանրային գրանցամատյանի վարումը:

Առաջարկում ենք

- Սահմանել օրենսդրական պարտականություն, որպեսզի ՀՀ-ում գրանցված և/կամ գործունեություն ծավալող բոլոր իրավաբանական անձինք բացահայտեն իրենց իրական սեփականատերերին, ոչ թե ուղղակի ներդնել և գործարկել վերջիններիս վերաբերյալ գրանցամատյան:
- Սահմանել պարտականություն, ըստ որի ՀՀ-ում արդեն գրանցված առևտրային իրավաբանական անձինք ողջամիտ ժամկետում ձեռք կբերեն տեղեկատվություն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ և կտրամադրեն գրանցամատյան վարող մարմնին, իսկ նոր գրանցվող առևտրային իրավաբանական անձանց համար նման տեղեկատվության տրամադրումը կհանդիսանա գրանցվելու համար պարտադիր պայման: Անհրաժեշտ է սահմանել, թե առևտրային իրավաբանական անձի աշխատակազմից կոնկրետ ում վրա է դրված նշյալ պարտականությունը, օրինակ՝ գործադիր տնօրեն, բացի այդ՝ նախատեսել վերոնշյալ տեղեկատվությունը արդիական պահպանելու պարտականություն:
- Սահմանել պարտականություն իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության վերաբերյալ՝ ներառյալ փոփոխություններ կատարելով բաժնետիրական ընկերությունները կարգավորող օրենսդրական նորմերում և սահմանելով բաժնետերերի ցանկի հրապարակայնություն:
- Սահմանել սանկցիաներ առևտրային իրավաբանական անձի և վերջինիս համապատասխան աշխատողի կողմից նշյալ պարտականությունը դիտավորյալ չկատարելու համար՝ այդ մասին պատշաճ ծանուցվելուց հետո, ապա ընկերությունները և այն աշխատակիցները:
- Նախատեսել լծակներ գրանցամատյան վարող մարմնի համար՝ տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով ինչպիսիք են բանկային և հարկային գաղտնիքների տիրապետումը:

vi. Նախատեսել լծակներ առևտրային իրավաբանական անձանց համար՝ իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով, ինչպիսիք են գործող սեփականատարերի կողմից իրենց բաժնեմասը վաճառելիս շահույթ/եկամուսու գեներացնելու անհնարինությունը:

24) Սոցիալական պաշտպանության համակարգի ծախսերի թափանցիկության և պետական բյուջեից տրամադրված միջոցների ծախսարդյունավետության բարձրացում (Միջոցառում 37)

Որպես ակնկալվող արդյունք նշված՝ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության համակարգին տրամադրված միջոցների ծախսերի ամսեկան պարբերականությամբ հրապարակումը ԱՍՀ նախարարության կայքում ինքնին չի կարող երաշխավորել այդ ոլորտին բյուջեից տրամադրված միջոցների ծախսարդյունավետության բարձրացում, ինչպես նաև փաստել, որ նշված ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նվազել են: Բացի այդ, հիշյալ միջոցառման համար բացակայում են հստակ քանակական և որակական ցուցանիշները:

Առաջարկում ենք

- i. *Խնդրվում է միջոցառման իրականացմամբ ակնկալվող արդյունքը և վերատուգիչ ցուցանիշը,*
- ii. *Սահմանել հստակ քանակական և որակական ցուցանիշներ:*

25) Քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի՝ միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (Միջոցառում 44)

Նախ հարց է առաջանում, թե ինչու է սույն միջոցառումը նախատեսված միայն կոռուպցիոն հանցանքների համար՝ դուրս թողնելով նաև կոռուպցիոն զանցանքները: Նշյալ միջոցառման կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ներկայումս, կոռուպցիոն հանցանքները սահմանվում են ՀՀ գլխավոր դատախազի հրամանով, և հաճախակի ենթարկվում շեշտակի փոփոխությունների տարբեր ՀՀ գլխավոր դատախազների կողմից: Ուստի, գտնում ենք որ սույն միջոցառման բաղկացուցիչ մասը պետք է լինի կոռուպցիոն հանցագործությունների կայուն ցանկի սահմանում: Բացի այդ, առկա են նաև կոռուպցիոն զանցանքներ, օրինակ՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականությունը չիրականացնելը: Այս մասով առհասարակ առկա չէ որևէ ցանկ, որով կթվարկվեն կոռուպցիոն զանցանքները:

Առաջարկում ենք

- i. Միջոցառմամբ ներառել նաև կոռուպցիոն զանցանքների զանցակազմերի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում առաջարկությունների ներկայացում,
- ii. Միջոցառմամբ ներառել նաև կոռուպցիոն հանցագործությունների ցանկի սահմանում օրենքի մակարդակով, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքում՝ հատուկ գլխով:
- iii. Միջոցառմամբ ներառել նաև կոռուպցիոն զանցանքների ցանկի սահմանում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ հատուկ գլխով:

26) Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում (Միջոցառում 45 – Ըստ նախագծի վրիպակի 44)

Նշյալ միջոցառումը խիտ կարևորում ենք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական հետապնդման մարմինները խոսափում են քրեական գործեր հարուցել նշված հոդվածով՝ հաշվի առնելով վերջինիս ապացուցման բեռի բաշխման և մի շարք այլ առանձնահատկություններ, և նախընտրում են գործեր հարուցել յուրացման և այլ հոդվածներով:

Առաջարկում ենք

- i. Վերանայել միջոցառման իրականացման պատասխանատու մարմինների ցանկը՝ ներառելով նաև հակակոռուպցիոն ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների (համաձայնությամբ),
- ii. Զարգացնել ազդարարների անանուն բողոքներով զբաղվող քրեական հետապնդման մարմնի կարողությունները՝ հաշվի առնելով վերջինիս առանձնահատուկ բնույթը՝ հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մարմնի շրջանակներում:

27) Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների մասին վիճակագրության վարում (Միջոցառում 46 – Ըստ նախագծի վրիպակի 45)

Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրության համալրում գույքի բռնագրավման և բռնագանձման վերաբերյալ տվյալներով (Միջոցառում 47 – Ըստ նախագծի վրիպակի 46)

Նշյալը բխում է ՏՀԶԿ առաջարկություններից, որը մենք ևս կարևորում ենք, քանի որ նպաստում է թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների իրացմանը: Սակայն, անհրաժեշտություն չենք տեսնում՝ նախատեսել վերոնշյալը որպես երկու առանձին միջոցառում:

Առաջարկում ենք

- i. Նշյալ երկու միջոցառումների միավորում մեկ միջոցառման ներքո:*
- ii. Միջոցառման վերանվանում՝ «Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համայրում» վերտառությամբ:*

28) Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով (Միջոցառում 48, ըստ նախագծի վրիպակի՝ 47)

Սույն առաջարկը բխում է ՏՀԶԿ զեկույցից և որպես ակնկալվող արդյունք նշվում է, որ «Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար»:

Սակայն, գտնում ենք, որ սույն միջոցառման իրականացման համար առկա չէ անհրաժեշտություն նման կարևոր Նախագծով սահմանելու համար, քանի որ այն ուղղակի մարմինների ներքին աշխատանքների արդյունավետության բարելավմանն է միտված:

Առաջարկում ենք

Սույն միջոցառումը Նախագծից հանել:

29) Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում (Միջոցառում 49 – Ըստ նախագծի վրիպակի 48)

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սույն առաջարկությունը բխում է և ՏՀԶԿ զեկույցից, և՛ ԻՀԱ-ի և Կոալիցիայի Գրությունից, որը խիստ կարևորվում է մեր կողմից: Որպես ակնկալվող արդյունք նշվում է, որ «Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և ապահովվելի է տվյալների պաշտպանության երաշխավորմամբ վերջինիս հասանելիությունը քրեական հետապնդման մարմիններին»:

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարում ունիվերսալ անկախ մարմին ունենալու մեր տեսլականը՝ գտնում ենք, որ վերջինիս ստեղծմամբ վերոնշյալ ռեեստրի տվյալների հասանելի լինեն հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմնի համար:

Առաջարկում ենք

Վերոնշյալ ռեեստրի տվյալների հասանելի դարձնել հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմնի համար:

30) Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում (Միջոցառում 50– Ըստ նախագծի վրիպակի 49)

Հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ՀՀ օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջներին (Միջոցառում 51– Ըստ նախագծի վրիպակի 50)

Նշյալ միջոցառումները, ըստ էության, իրենց մեջ ներառում են հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների վերականգմանն ուղղված միջոցառումներ: Սակայն, գտնում ենք, որ նշյալ միջոցառումները բավարար չեն գողացված ակտիվները վերականգնելու համար: Օրինակ, կոռուպցիայի հետևանքով յուրացված ակտիվների վերականգման մակարդակի և վերականգնված ակտիվների հաշվետվողականության մակարդակի ավելացումը սահմանված է «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որով պետություններին հանձնարարվում է նախատեսել ԱլԳ տարածաշրջանում հանցագործություններից ստացված եկամուտների արդյունավետ առգրավումը, բռնագրավումը և կառավարումը թույլատրող օրենսդրական շրջանակ, ինչպես նաև հիմնադրել ակտիվների վերականգնման և կառավարման գրասենյակներ՝ ԱլԳ տարածաշրջանում հանցավոր ճանապարհներով ձեռք բերված/չհիմնավորված հարստության նույնականացման, սառեցման, կառավարման և բռնագրավման գրանցամատյանի վարմամբ:

Առաջարկում ենք

- i. Նշյալ առաջարկությունները միավորել և խմբագրել «Ներդնել հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների վերականգման ծրագիր» վերտառությամբ, որտեղ ներառել նաև ներքոշարադրյալ ենթամիջոցառումները:*
- ii. Հիմնադրել ակտիվների վերականգնման գրասենյակ: Որոշել, թե որպես այդպիսին կարող է ծառայել արդեն իսկ գործող մարմիններից, թե անհրաժեշտ է ստեղծել նոր մարմին կամ ստորաբաժանում, օրինակ՝ միայն կոռուպցիոն գործերով մասնագիտացված վարչություն դատախազությունում:*
- iii. Ստեղծել գողացված ակտիվների ռեեստր:*
- iv. Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման նպատակով ամրապնդել միջազգային, մասնավորապես՝ երկկողմ փոխօգնության ինստիտուտը,*
- v. Ներդնել ակտիվների վերականգնման քրեական վարույթի շրջանակներից դուրս քաղաքացիական (օրենսդրության շրջանակներում ակտիվների վերականգնման in rem) ընթացակարգեր, ինչպիսիք գործում են Միացյալ Թագավորությունում, Շվեյցարիայում,*

Իռլանդիայում, Բուսիայում, Գերմանիայում, Սլովենիայում, Կանադայում, ԱՄՆ-ում,
Լիխտենշտեյնում և այլ զարգացած երկրներում:

vi. Կատարել օրենսդրական բարեփոխումներ՝ ակտիվների պետականացման, իսկ
այնուհետև՝ ռեպատրիացիայի կառուցակարգերի ներդրման նպատակով:

31) Դիտարկել գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության, դատախազների աշխատանքի ընդունման մրցույթի կազմակերպման, գլխավոր դատախազի հանձնարարականների բողոքարկման վերաբերյալ օրենսդրության կատարելագործման նպատակահարմարությունը (Միջոցառում 53, Ըստ նախագծի վրիպակի՝ 52)

Գտնում ենք, որ դատախազության համակարգում, բացի վերոնշյալից, առկա է նաև այլ հակակոռուպցիոն բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտություն, որոնցից որոշները ունեն ինստիտուցիոնալ բնույթ: Մասնավորապես, դատախազության համակարգում գործում է կոռուպցիոն և տնտեսական հարցերով մասնագիտացված վարչություն, սակայն գտնում ենք, որ **անհրաժեշտ է ունենալ միմիայն կոռուպցիոն գործերով մասնագիտացված վարչություն:** Վերոնշյալը բխում է կոռուպցիոն գործերով մասնագիտացված իրավապահ համակարգ, որը մենք տեսնում ենք հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի ներքո, ինչպես նաև՝ կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարան ունենալու տեսլականից:

Առաջարկում ենք.

Դատախազությունում ստեղծել միմիայն կոռուպցիոն հանցագործություններով զբաղվող ստորաբաժանում:

32) Պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս անձանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում (Միջոցառում 54– Ըստ նախագծի վրիպակի 53)

Գործարար ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման արշավի կազմակերպում (Միջոցառում 55– Ըստ նախագծի վրիպակի 54)

Տեղեկատվության ազատության բնագավառի կարգավորումների, այդ թվում՝ տեղեկատվության պրոակտիվ հրապարակման վերաբերյալ հանրային ծառայողների, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացում (Միջոցառում 57– Ըստ նախագծի վրիպակի 56)

Հարկ է նշել, որ վերջին երկու թվարկված միջոցառումներն արդեն իսկ ներառված են առաջինում, քանի որ նախատեսվում է հակակոռուպցիոն նոր ռազմավարության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում՝ **իրազեկման տարեկան ծրագրի իրականացմամբ:**

Առաջարկում ենք

Հանրային իրազեկմանը վերաբերող բոլոր միջոցառումները ներառել մեկ իրազեկման միջոցառման ներքո:

- 33) Քաղաքացիական ծառայողների շրջանում քաղաքացիական ծառայության նոր կարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների իրականացում (Միջոցառում 58–
Ըստ նախագծի վրիպակի 57)

2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, որի հիման վրա 2019 թվականի հունվարի 9-ին ՀՀ առաջին փոխվարչապետը քաղաքացիական ծառայության **վերապատրաստման կարգը** սահմանելու մասին որոշում է ընդունել, որով քաղաքացիական ծառայողներ պարբերաբար վերապատրաստում են անցնելու:

Առաջարկում ենք

Նշյալ միջոցառումը նախագծից հանել՝ անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով:

- 34) Հանրային ծառայողների շրջանում էթիկայի կանոնների վերաբերյալ վերապատրաստման դասընթացների իրականացում (Միջոցառում 59 – Ըստ նախագծի վրիպակի 58)

ՏՀԶԿ-ի զեկույցի 12-րդ առաջարկության 2-րդ կետով առաջարկվում է ամբողջ հանրային ծառայության համար ապահովել պարբերական և համակարգված էթիկայի դասընթացներ: Որպես հիշյալ միջոցառման իրականացման վերստուգիչ ցուցանիշ՝ նշվում է, որ 2019-2022 թվականների ընթացքում իրականացվելու են 35 վերապատրաստման ծրագրեր: Այդ առնչությամբ, հաշվի առնելով, որ հիմնականում հանրային ծառայողների վերապատրաստման գործընթացը կազմակերպվում է հանրային ծառայության մեջ ընդգրկվող պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, հետևաբար գտնում ենք, որ առկա է անհրաժեշտություն պետական ծառայության առանձին տեսակների վերապատրաստման ծրագրերում և վերջիններիս կարգավորող իրավանորմերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Առաջարկում ենք

Փոփոխություններ կատարել պետական ծառայության առանձին տեսակների վերապատրաստման ծրագրերը սահմանող իրականորմերում և նախատեսել էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթացի անցկացումը՝ որպես առանձին և պարտադիր բաղադրիչ:

35) Հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում (Միջոցառում 60, ըստ նախագծի վրիպակի՝ 59):

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման N 3 հավելվածով հաստատվել է «Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը», որի 1-ին կետով, որպես առանձին միջոցառում, նախատեսվել է **հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում**: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ միջոցառմամբ նախատեսվում է ներդնել հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանն ուղղված պարտադիր վերապատրաստումների ծրագիր, ինչն արդեն իսկ իրականացվում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագրի շրջանակներում՝ որպես առանձին միջոցառում: Ավելին, ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 569-Ա հրամանով այն ներառվել է 2018 թվականի 4-րդ եռամսյակում վերապատրաստումների ծրագրում:

Առաջարկում ենք

Նախագծից հանել վերոնշյալ միջոցառումը՝ հաշվի առնելով, որ ներկայումս արդեն իսկ հակակոռուպցիոն և բարեխղճության թեմաներով հարկային և մաքսային ծառայողները վերապատրաստվում են:

36) ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ-ի միջոցառումների ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի մշակում ու ներդնում (Միջոցառում 61, ըստ նախագծի վրիպակի՝ 60):

Գտնում ենք, որ Նախագծով որպես միջոցառում չեն կարող նախատեսվել մոնիթորինգի ցուցանիշների մշակումն ու ներդնումը, քանի որ վերջիններս պետք է արդեն իսկ ներառվեն յուրաքանչյուր միջոցառման հետ համատեղ: Այլ հարց է, որ առկա չէ մոնիթորինգային գործուն համակարգ, որի վերաբերյալ ավելի մանրամասն առաջարկներ նախատեսված են Ռազմավարության Նախագծի համապատասխան բաժնում: Բացի այդ, նշյալ միջոցառման ժամկետները ևս ենթակա են վերանայման:

Առաջարկում ենք

- i. Միջոցառմամբ նախատեսել ոչ թե մոնիթորինգի ցուցանիշների համակարգի մշակում և ներդնում, այլ՝ մոնիթորինգի համակարգի մշակում և ներդնում,*
- ii. Որպես կատարման վերջնաժամկետ սահմանել 2019թ առաջին կիսամյակը:*

37) Հակակոռուպցիոն բնույթի հանրային իրազեկման քարոզարշավների կազմակերպում (Միջոցառում 62, ըստ նախագծի վրիպակի՝ 61):

Սույն միջոցառման նախատեսումը շատ կարևոր է, սակայն որպես ակնկալվող արդյունք նախատեսվում է հանրային իրազեկման քարոզարշավների իրականացումը միայն տնտեսվարող սուբյեկտների շրջանում և միայն հարկային և մաքսային ոլորտներում հակակոռուպցիոն ընկալման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Անհասկանալի է, թե ինչու՞ է սահմանվել իրազեկման ենթակա սուբյեկտների նման նեղ շրջանակ: Բացի այդ, նշյալ միջոցառումը զետեղված է մոնիթորինգի բաժնի ներքո, մինչդեռ որևէ աղերսներ չկան վերջիններիս միջև:

Առաջարկում ենք

Սույն միջոցառման ակնկալվող արդյունքներ բաժնում ներառել

- i. նշյալ միջոցառման ակնկալվող արդյունք բաժնից հանել միայն տնտեսվարող սուբյեկտներին և հարկային ու մաքսային ոլորտներին վերաբերող սահմանափակումները,*
- ii. նշյալ միջոցառումը զետեղել նոր՝ հակակոռուպցիոն կրթություն գլխի ներքո,*
- iii. հակակոռուպցիոն սոցիալական թիրախավորված գովազդների կիրառում,*
- iv. համայնքներում բնակչության և տեղական հասարակական կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն բնույթի հանրային քննարկումների կազմակերպում,*
- v. կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9-ին, համապետական ֆլեշմոբի կազմակերպում,*
- vi. կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9-ին, երիտասարդական համաժողովի և հակակոռուպցիոն թեմաներով սյենար նիստերի կազմակերպում,*

- vii. տարբեր համակարգչային խաղերի ծրագրավորում, որոնք կվերաբերեն կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես տեղեկատվական բնույթի, այնպես էլ՝ իրավիճակային՝ հիմնված հակակոռուպցիոն սցենարների վրա.
- viii. թատրոններում հակակոռուպցիոն բնույթի բեմականացված ներկայացումների կազմակերպում,
- ix. հակակոռուպցիոն համապետական մրցույթների և ճամբարների կազմակերպում:

38) Համակարգային մոտեցման որդեգրում հակակոռուպցիոն կրթության ներդրման ուղղությամբ

Վերոգրյալում արդեն անդրադարձ ենք կատարել, որ Հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի կողմից իրականացվող կարևոր գործառնություն՝ հակակոռուպցիոն կրթություն մասին Ռազմավարության նախագծով, ըստ էության, անդրադարձ չի կատարվել: Փոխարենը, Ռազմավարության նախագծով առանձին բաժին է նախատեսվել «Հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթություն» վերնագրմամբ, որում ներառված թվով 8 միջոցառումները ոչ միայն չեն կարող համարվել բավարար երկրում հակակոռուպցիոն կրթությունը բովանդակային հենքի վրա դնելու, այլ նաև խնդրահարույց է երկրի եռաստիճան կրթական համակարգում այն ներդնելու տեսանկյունից: Գտնում ենք, որ հակակոռուպցիոն կրթությունը պետք է ունենա մեկ հիմնական նպատակ՝ ժողովրդին դաշնակից դարձնելը կոռուպցիայի դեմ պայքարում, և վերջինս պետք է ունենա անկյունաքարային նշանակություն:

Առաջակում ենք

Ներդնել էթիկայի, բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաների ուսուցման մոդուլներ նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություններում՝ հաշվի առնելով նշյալ հաստատություններում ուսում ստացող անձանց տարիքային առանձնահատկությունները:

39) Իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության համակարգի բարելավում

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 1205-Ն որոշմամբ հաստատված կարգով, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ պայմանավորված ներկայումս մշակվում է նոր կարգ:

Առաջարկում ենք

- i. Նոր մշակվող կարգում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում ներդնել հակակոռուպցիոն բնագավառիկարգավորման ազդեցության գնահատման առավել ճկուն, արդիականացված համակարգ և մեթոդաբանություն՝ հիմքում ունենալով պետության կողմից հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման առաջնահերթությունները և վերջին տարիների օրենսդրական բարեփոխումների արդյունքները:*
- ii. Ներդնել հակակոռուպցիոն փորձագետների ակրեդիտացման համակարգ, ինչպիսին գործում է օրինակ, Ռուսաստանում:*
- iii. Վերապատրաստել հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց:*

40) Կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարանի ստեղծում

Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ կոռուպցիայի դեմ պայքարում ավելի ու ավելի տարածում է գտնում կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարանների ստեղծումը: Ներկայումս շուրջ 20 երկրներում կան հատուկ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ, օրինակ՝ Ինդոնեզիա, Քենիա, Ֆիլիպիններ, Սլովակիա, Ուգանդա և այլն: Հակակոռուպցիոն դատարան ասելով մենք հասկանում ենք դատարան, դատավոր կամ դատարանի մասնագիտացված կազմ, որը մասնագիտացված է կոռուպցիոն գործեր քննելում: Նման դատարանի ստեղծումը տրամաբանական շարունակությունն է մասնագիտացված հակակոռուպցիոն իրավապահ համակարգի, որը մենք տեսնում ենք ունիվերսալ հակակոռուպցիոն մարմնի ներքո և դատախազությունում մասնագիտացված հակակոռուպցիոն ստորաբաժանման: Հակառակ պարագայում, որքան էլ որ մասնագիտորեն պատրաստված գործը գնա դատարան, եթե դատավորը չլինի մասնագիտացված հակակոռուպցիոն գործերում, որտեղ առկա են մի շարք առանձնահատկություններ, օրինակ՝ ապօրինի հարստացման գործերում ապացուցման բեռի հետ կապված, ապա չի կարող արդար և անաչառ վճիռ կայացնել: Արդյունքում, պետության կողմից իրականացված ամբողջ հակակոռուպցիոն ջանքերը զուր կանցնեն:

Առաջարկում ենք

Ստեղծել կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարան կամ հատուկ մասնագիտացված դատական կազմ:

41) Միանալ «Թափանցիկության խոստում» նախաձեռնությանը

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթությունների շարքին է պատկանում «Թափանցիկության խոստում» (Transparency Pledge) նախաձեռնության միացումը, ինչպես նաև հակակոռուպցիոն ջանքերի վերաբերյալ տեղեկատվության ազատության իրավունքի խթանումը: «Թափանցիկության խոստում»-ն իրենից ներկայացնում է պետության կողմից ստանձնած հանձնառությունը՝ հետևել թվով վեց թափանցիկության սկզբունքի՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի վերանայման մեխանիզմի ժամանակ: Դրանց թվին է պատկանում նաև՝ քաղաքացիական հասարակության հետազոտողների ֆինանսավորումը, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ներկա գտնվել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի օժանդակ մարմիններում, ինչպես նաև կազմակերպել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի վերանայման արդյունքում կազմված գեկույցի քննարկումներ և այլն: Արդեն իսկ մի շարք երկրներ միացել են խոստմանը՝ Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Լատվիա, Նորվեգիա, ԱՄՆ, Սլովենիա և այլն:

Առաջարկում ենք

- i. Միանալ «Թափանցիկության խոստում» նախաձեռնությանը
- ii. Նախատեսել միջոցներ ՀՀ պետական բյուջեից խոստմամբ ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ:

42) Պայքարել գույքը հանրային գերակա շահ ճանաչելու գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերի դեմ

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով փորձ է կատարվել սահմանել, թե գերակա հանրային շահը ի՞նչ նպատակներ կարող է հետապնդել՝ տալով բավականին ընդգրկուն մեկնաբանություն, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր դեպք ներառել այդ հասկացության ներքո: Բացի այդ, թվարկված է միմիայն նպատակների բնույթը՝ գերակա հանրային շահը կարող է հետապնդել պետության պաշտպանության, պետության և հասարակության անվտանգության ապահովման, կրթության, առողջության սպորտի զարգացման ապահովման և այլ նպատակներ:

Առաջարկում ենք

- i. փոփոխություն կատարել «հանրության գերակա շահ»-ի սահմանման մեջ և թվարկել ու ներառել հստակ կառույցների, ոլորտների անվանումները, որոնց գործունեության բարելավումն իսկապես արտացոլում է հանրության գերակա շահերը,

- ii. սահմանել, որ յուրաքանչյուր դեպքում, ձեռքբերվող սեփականությունը բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելով, պետությունը պարտավոր է հիմնավորել, որ այդ շահը օտարվող սեփականության սեփականատերերի շահից գերակայող է, և նպատակի իրագործումն անհնար է առանց կոնկրետ այդ սեփականության ձեռքբերման: Ընդ որում, եթե ձեռք է բերվում մի քանի սեփականատերերի գույք, ապա այդ հիմնավորումը պետք է տրվի նրանցից յուրաքանչյուրի գույքի ձեռքբերման կապակցությամբ:
- iii. սահմանել, որ գերակա հանրային շահ ճանաչելու կառավարության որոշման համար անհրաժեշտ հիմքերը և փաստաթղթերն իրենց մեջ ներառում են օտարման ենթակա տարածքի:

43) Նախատեսել հակակոռուպցիոն աուդիտ

Նման փորձ առկա է, օրինակ, Բոստոնի քաղաքում, Լեհաստանում, Չեխիայում և այլն: Ներկայումս սույն հարցի վերաբերյալ իրականացվում է ուսումնասիրություն: Արդյունքները կներկայացվեն լրացուցիչ:

Առաջարկում ենք՝

Նախատեսել հակակոռուպցիոն աուդիտ հանրային և մասնավոր ոլորտներում

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ

31.01.2019թ.